Հետազոտություն

Funded by the European Union
Հիմնադրամը՝ Եվրոպական միության կողմից

Armenian Progressive Youth

Երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը

«ՀԱՅ ԱՌԱՋԱԴԵՄ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ» ՀԿ

Երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը

Հետազոտություն

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 32:316.3
ԳՄԴ 66+60.54
Ե 859

Ե 859 Երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը/ «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ. - Եր., 2022, 81 էջ

Հետազոտությունն իրականացվել է «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպության կողմից «Հայաստանում փաստարկված երիտասարդական քաղաքականության մշակում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության կրթաթոշակային ծրագրի շրջանակներում:

Սույն հետազոտությունը հրատարակվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակության բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Հայ առաջադեմ երիտասարդություն» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

www.apy.am

ISBN ISBN 978-9939-9295-1-4

ՀՏԴ 32:316.3
ԳՄԴ 66+60.54

© «Զարտպրինտ», ՍՊԸ, 2022
© «Հայ առաջադեմ երիտասարդություն» ՀԿ, 2022

Բոլոր իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակության ոչ մի մասը չի կարող վերարտադրվել, տարածվել կամ օգտագործվել որևէ ձևով՝ ներառյալ էլեկտրոնային, պատճենահանման, ձայնագրման միջոցով կամ տեղեկատվության պահեստավորման և որոնման համակարգերով, առանց գրավոր թույլտվության:

Բովանդակություն

Ներածություն 6

Եզրակացություններ և առաջարկություններ 10

Վերլուծություն 20

Մաս 1. «Ո՞վ է երիտասարդը» 20

Մաս 2. Ի՞նչ է երիտասարդական մասնակցությունը. ինչպիսի՞ մասնակցություն են երիտասարդներն ունենում որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործընթացներում ... 23

Մաս 2.1: Քաղաքացիական մասնակցության իրավիճակային վերլուծություն 29

Համայնքային մակարդակ 29

Պետական մակարդակ 42

Մաս 2.2: Քաղաքական մասնակցության իրավիճակային վերլուծություն (խոչընդոտներ ու կարիքներ) 49

Գրականության ցանկ 59

Հավելված 1. Հարթի մասնակցության աստիճանակարգ 60

Հավելված 2. Քաղաքական ու քաղաքացիական մասնակցություն 61

հավելված 3. Ֆոկուս խմբային քննարկումների հարցաշար 62

հավելված 4. Փորձագիտական հարցազրույցների հարցաթերթ 65

հավելված 5. Քանակական հետազոտության հարցաթերթ 68

Բանալի բառեր.
Երիտասարդների մասնակցություն, երիտասարդական քաղաքականություն, քաղաքացիական մասնակցություն, քաղաքականության մշակում, որոշումների կայացում, երիտասարդական աշխատանք:

Ներածություն

Երիտասարդությունը համարվում է հասարակության շարժիչ ուժը, ինչպես նաև փոփոխության գլխավոր աղբյուրն ու ժողովրդավարության կայացման գործում ամենամեծ ներդրում ունեցող խմբերից մեկը: Երիտասարդների մասնակցությունը պետության հասարակական, քաղաքական, քաղաքացիական կյանքին համարվում է նրանց քաղաքական-քաղաքացիական իրավունքներից մեկը, սակայն, ներկայումս, երիտասարդները բախվում են բազմաթիվ խոչընդոտների ու մարտահրավերների այն իրացնելիս (քաղաքական ու քաղաքացիական մասնակցության տարբերությունը նկարագրված է հավելվածում. նշենք միայն, որ գրականության մեջ քաղաքացիական մասնակցությունը համարվում է քաղաքական մասնակցության տեսակ, սակայն այս հետազոտության մեջ փորձ է կատարվել քաղաքական մասնակցությունն առանձնացնել՝ դիտարկելով այն քաղաքական կուսակցություններին հարելու կամ անդամակցելու, քաղաքական պաշտոններ զբաղեցնելու, քաղաքական ակտիվություն ցուցաբերելու տեսանկյունից):

Ներկայումս թե՛ միջազգային, թե՛ տարածաշրջանային ու տեղական մակարդակներում քաղաքականությունների մշակման ամենաարդիական խնդիրներից և հիմնաքարային հարցերից է՝ «որքանո՞վ ու ինչպե՞ս են տվյալ քաղաքականությունից ուղիղ ազդեցություն կրող անհատները՝ շահառու խմբերը, մասնակցում այդ քաղաքականության մշակման գործընթացներին»: Հասարակության շրջանում հասարակական-քաղաքական կյանքում մասնակցությունը խթանելու և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է, որ տվյալ հասարակությունն ունենա գիտելիք ու հմտություններ և, որ ամենակարևորն է, համապատասխան հարթակ, դրանք կիրառելու համար: Երիտասարդների ներուժը խթանելու, ինչպես նաև նրանց կարողությունները զարգացնելու փորձերի մասին բազմիցս խոսվել է թե՛ պետական տարբեր գերատեսչությունների, թե՛ քաղաքացիական հասարակության ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից: Ավելին, ՀՀ-ում կրթական ու սոցիալական ոլորտում որոշակի քաղաքականությունների փոփոխությունները, ինչպես նաև ոլորտային ռազմավարություններն ու դրանց հիմքով մշակված գործողությունների պլանները վկայում են այն մասին, որ փաստաթղթային մակարդակում պետությունը փորձեր է կատարում խթանելու երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը: Սակայն անհրաժեշտ է նաև հասկանալ, թե ինչպես են հենց երիտասարդներն իրենց դիրքավորում այս գործընթացներում՝ որպես ՀՀ քաղաքացի, և թե որքան արդյունավետ են համարում նրանք պետության ջանքերը՝ խթանելու երիտասարդների մասնակցությունը քաղաքականությունների մշակմանն ու որոշումների կայացմանը:

Այս հետազոտության նպատակն է պարզել, թե ՀՀ-ում երիտասարդները որքանով են ներգրավված քաղաքականությունների մշակման ու որոշումների կայացման գործընթացներում:

Հետազոտության ենթանպատակներն են.

- Դուրս բերել քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների մասնակցութ-

յանն առչնվող խնդիրներն ու կարիքները՝ ուսումնասիրելով այդ գործընթացում ներգրավված խմբերի փորձառություններն ու կարծիքները:

- Դուրս բերված խնդիրների ու կարիքների, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով կատարել ներկա իրավիճակի գնահատում:
- Մշակել արդյունավետ առաջարկներ, որոնք կհասցեագրեն վեր հանված բացերն ու կարիքները:

Հետազոտության շրջանակներում համադրվել են իրացման և փաստաթղթերի վերլուծության որակական և քանակական մեթոդները, մասնավորապես՝ առկա իրավական շրջանակի ու գրականության ուսումնասիրություն, առցանց քանակական հարցախույզ, փորձագիտական հարցազրույցներ և ֆոկուս խմբային քննարկումներ ՀՀ տարբեր մարզերում քաղաքային ու գյուղական համայնքներում բնակվող երիտասարդների հետ:

Հետազոտությունը բաղկացած է 3 հիմնական փուլերից.

- Ֆոկուս խմբային քննարկումներ ՀՀ տարբեր մարզերում բնակվող երիտասարդների հետ (կատարվել է չորս փորձագիտական հարցում),
- Խորքային հարցազրույցներ պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ (8 փորձագիտական հարցում),
- Առցանց հարցախույզ երիտասարդների շրջանում.
    - Հարցախույզին մասնակցել է 187 երիտասարդ, որոնցից 29% արական, 70% իգական ու 1%-ն այլ սեռի ներկայացուցիչներ են: Մասնակիցների 34.9%-ը ներկայացնում է Երևանը, իսկ 65.1%-ը ՀՀ բոլոր մարզերը:

Այս հետազոտության վերջնական զեկույցը պատրաստելիս փորձ է կատարվել շեղվել հետազոտությունների դասական կառուցվածքից՝ առանձին ենթաբաժիններ ու նկարագրություն գրականության, փաստաթղթերի վերլուծության ու դաշտային աշխատանքների վե-

ռաբերյալ: Փոխարենը, հետազոտական թիմը փորձել է առանձին հարց-ենթաբաժինների միջոցով տարբեր դիտանկյուններից վերլուծել ու ամփոփել փաստաթղթերի, գրականության և դաշտային աշխատանքների արդյունքում դուրս բերված տեղեկատվությունը՝ խնդիրներն ու կարիքները:

Հիմնական հարց-ենթաբաժինները երկուսն են.

- Ո՞վ է երիտասարդը:
- Ի՞նչ է երիտասարդական մասնակցությունը. ինչպիսի՞ մասնակցություն են երիտասարդներն ունենում որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործընթացներում `
    - համայնքային մակարդակում քաղաքական/քաղաքացիական մասնակցություն,
    - պետական մակարդակում քաղաքական/քաղաքացիական մասնակցություն:

Փորձելով ուսումնասիրել մասնակցության տարբեր ոլորտները՝ այս հետազոտությունը կանգ է առնում քաղաքական ու քաղաքացիական մասնակցությունների ուսումնասիրության վրա՝ փորձելով հասկանալ դրանք համայնքային ու պետական մակարդակներում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Եզրակացություն 1

Պետական մակարդակ

Բոլոր մակարդակներում (պետական, համայնքային, քաղաքացիական հասարակություն ու երիտասարդներ) «Երիտասարդ» տերմինի թյուրըմբռնում ու միջազգային փաստաթղթերի հետ համաձայնեցնելու խնդիր:

Առաջարկություն 1

Ուսումնասիրել միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերը, հստակեցնել հասարակության տարբեր տարիքային խմբերին, այս դեպքում երիտասարդներին ու երեխաներին՝ հստակ սահմանելով ու ամրագրելով երիտասարդության տարիքային միջակայքն ու այդ միջակայքերի ենթաբաժանումները:

Եզրակացություն 2

Պետական, համայնքային մակարդակներ

Մասնակցության վերաբերյալ պետության, քաղաքացիական հասարակության ու երիտասարդների կողմից միասնական մոտեցման հստակ բացակայություն:

Առաջարկություն 2

Հաշվի առնելով փորձագիտական համայնքի ու երիտասարդական որոշ խմբերի կողմից Հարթի աստիճանակարգի օգտագործման հաջող փորձը, առաջարկվում է պետական մակարդակում որդեգրել մասնակցության այս մոդելը՝ որպեսզի հնարավոր լինի ավելի չափելի ու հստակ գնահատականներ տալ ներկայիս երիտասարդության մասնակցության իրավիճակին՝ իրավիճակային հետազոտություն կատարելիս:

Առաջարկություն 3

Այդ մոտեցումը ներդնել երիտասարդության ոլորտի պետական փաստաթղթերում ու տարածել այն այլ մակարդակներում (մարզային ու համայնքային) :

Եզրակացություն 3

Պետական, համայնքային մակարդակներ

Երիտասարդների շրջանում պետական ու համայնքային մակարդակներում մասնակցության ոլորտին վերաբերող գիտելիքի ու հմտությունների պակաս (այդ թվում նաև տարբեր գերատեսչությունների գործունեության ու գործառույթների վերաբերյալ տեղեկատվության պակաս) :

Առաջարկություն 4

Երիտասարդների շրջանում որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում մասնակցայ-

նության հմտությունները զարգացնելու համար նախարարության տարբեր վարչությունների, ՏԻՄ-երի ու քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև համագործակցության խթանում: Կարևոր է, որ համայնքապետարանները ծառայեն որպես երիտասարդների համար փորձառական գիտելիք ստանալու, ինչպես նաև հմտությունները զարգացնելու կարևոր կառույցներ:

Առաջարկություն 5

Հստակ ուշադրություն դարձնել երիտասարդության շրջանում քաղաքականություն (politics) ու քաղաքականություն (policy) բառերի թյուրըմբռնումներին ու թյուրընկալումներին՝ փորձելով տարբեր գործողությունների միջոցով շտկել իրավիճակը (արշավներ, կրթական նյութի ինտեգրում):

Եզրակացություն 4

Պետական, համայնքային մակարդակներ (տեղական ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությամբ)

Համայնքապետարանի աշխատակիցների կարողությունների ու հմտությունների, գիտելիքի, ինչպես նաև հաղորդակցության պակաս:

Առաջարկություն 6

Դիտարկելով միջազգային ու տեղական կառույցների հաջող փորձերը՝ զարգացնելու ՏԻՄ աշխատակիցների կարողությունները, մշակել համապարփակ վերապատրաստումների շարք նրանց համար՝ տրամադրելով համապատասխան գիտելիք ու հմտություններ՝ հատկապես ինչպես հաղորդակցվել երիտասարդների ու համայնքի բնակիչների հետ: Այս վերապատրաստումների ընթացքում ներառել նաև երիտասարդների շրջա-

նում մասնակցությունը խթանելու ու մասնակցության գործիքների վերաբերյալ մոդուլներ:

- Մշակել ու ներդնել նմանատիպ պարտադիր վերապատրաստում համայնքի ղեկավարների համար (քանի որ ՏԻՄ մասին օրենքի 46-րդ հոդվածով համայնքի ղեկավարի լիազություններից է երիտասարդների հետ աշխատանքը[1])

Առաջարկություն 7

Դասընթացներին կարելի է ներառել նաև նույն համայնքի երիտասարդներին՝ գործնական աշխատանքները ավելի գործնական ու իրական դարձնելու ու երկխոսություն խթանելու համար:

Առաջարկություն 8

Համայնքային մակարդակում աշխատակիցների շրջանում երիտասարդների դերի ու կարևորության մասին կազմակերպել միջոցառումներ՝ բարձրացնելով ՏԻՄ իրազեկվածությունը ու լուծելով երիտասարդների դերի մասին թյուրընկալումներն ու կարծրատիպերը:

Եզրակացություն 5 — Պետական, համայնքային մակարդակներ

Տարբեր պետական կառույցների, այդ թվում նաև ՏԻՄ-երի մակարդակում, հաղորդակցության ռազմավարությունների բացակայություն:

Առաջարկություն 9

Երիտասարդների շրջանում տեղեկատվության պակասը լրացնելու, ինչպես նաև ՏԻՄ, պետություն, հասարակական ու

1. ՀՀ Տեղական ինքնակառավարման մասին օրենք, 2002, https://bit.ly/3F3c5ho:

միջազգային կազմակերպություններ և երիտասարդություն համագործակցությունը խթանելու համար, տարբեր մակարդակներում մշակել ու կիրարկել հաղորդակցության ռազմավարություններ:

Առաջարկություն 10

Անհրաժեշտ է այս ռազմավարություններում ներառել հաղորդակցության ու մասնակցության ոչ ավանդական ու նորարարական մեթոդներ՝ հաշվի առնելով արագ զարգացող աշխարհին ու երիտասարդների կարիքները:

Եզրակացություն 6

Պետական, համայնքային մակարդակներ (հասարակական կազմակերպությունների հետ համագործակցելով)

Պետության, ՏԻՄ-երի, ինչպես նաև հասարակության կողմից երիտասարդության նկատմամբ ոչ լուրջ ու կանխակալ՝ կարծրատիպային վերաբերմունք:

Առաջարկություն 11

Մշակել հանրային արշավներ «Երիտասարդը կարևոր է» կամ այլ վերնագրերով՝ ապահովելով հանրային իրազեկում երիտասարդների դերի ու նշանակության վերաբերյալ: Սրանք կօգնեն ազդել հանրային ընկալումների վրա՝ նվազեցնելով կարծրատիպերի վերարտադրումը:

Առաջարկություն 12

Մշակել ու ներդնել երիտասարդների մասնակցությունը գնահատող մեխանիզմներ (որոնք սահմանափակված չեն լինի կամավորական աշխատանքի ճանաչման օրենսդրական

նախագծի ընդունմամբ ու կիրարկմամբ): Լավագույն տարբերակներից կարող է լինել՝ համայնքներում ու մարզային մակարդակում ամենաակտիվ երիտասարդների ակտիվության գնահատումը, լավագույն բարեփոխման առաջարկ մրցույթի տարբերակը ու երիտասարդների մասնակցության հաջող փորձառությունների պատմությունների լուսաբանումը:

Եզրակացություն 7

Պետական մակարդակ

Պետական ու համայնքային մակարդակում երիտասարդական կառույցների հիմնականում ձևական լինելն ու դրանց ի սպառ բացակայությունը:

Առաջարկություն 13

Անհրաժեշտ է գնահատել նախկինում ու ներկայումս երիտասարդական ոլորտում գործող պետական կառույցների կամ դրանց առընթեր մարմինների գործունեությունն ու արդյունավետությունը (մասնավորապես՝ Հայաստանի ազգային երիտասարդական խորհրդի աշխատանքները, ներկայումս կազմալուծված Երիտասարդական միջոցառումների կազմակերպման ՊՈԱԿ-ի ու երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտը): Սա կօգնի հասկանալ, թե ինչպես կարող է պետությունը ստեղծել այնպիսի կառույցներ, որոնք կաջակցեն ԿԳՄՍՆ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ ու շարունակական կրթության վարչության աշխատանքներին (հասկանալով, որ ներկայումս այս վարչության մարդկային ռեսուրսները բավարար չեն երիտասարդների հետ ուղիղ համագործակցության ու հաղորդակցության, ինչպես նաև տարբեր ծրագրեր կատարելու համար):

Առաջարկություն 14

Համայնքներում, մասնավորապես ՏԻՄ-երին կից, ստեղծել «երիտասարդական աշխատողի» հաստիք, որը կունենա նույն պատասխանատվության աստիճանն, ինչ համայնքային սոցիալական աշխատողը, սակայն կզբաղվի բացառապես երիտասարդների հիմնախնդիրներով ու կդառնա նախարարություն-համայնքային երիտասարդություն շղթայում կապող օղակ՝ բարձրացնելով երիտասարդների խնդիրներն ու կարիքները:

Առաջարկություն 15

Ամրապնդել ՏԻՄ-երին կից, նախարարությանը կից երիտասարդական խորհուրդների ինստիտուտը, ստեղծել վարչապետին կից երիտասարադական խորհուրդ (նախկինում այսպիսի խորհուրդ եղել է, սակայն այն այլևս չի գործում), որը կունենա երիտասարդական ոլորտի քաղաքականություններում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև առաջարկություններով հանդես գալու լիազորություններ: Այս բաժնով ստեղծել երիտասարդների հետ պարբերական կապի մեխանիզմներ, որի արդյունքում միայն ՏԻՄ հարցերի քննարկման դեպքում չէ, որ երիտասարդները կհրավիրվեն համայնքապետարան:

- Առաջարկվում է օգտագործել Եվրոպական միության կողմից առաջարկվող՝ «Կառուցողական երկխոսություն երիտասարդների համար ու մասին» մեթոդը: Սա իրենից ներկայացնում է երիտասարդության ոլորտում մասնակցային քաղաքականության մշակման կայացած գործընթաց, որը կարող է տարածվել այլ ոլորտների վրա ևս[2]

2. Structured Dialogue on Youth, https://bit.ly/3ipzstQ.

Առաջարկություն 16

Մարզային մակարդակում՝ Արագածոտնի մարզի օրինակով, ստեղծել տեղական ՀԿ-ների անձրևանոց կազմակերպություն, որը պետք է կազմակերպի ու սինխրոնացնի մարզում երիտասարդների հետ տարվող աշխատանքները կամ աջակցել դրանց ստեղծմանը:

- Այս պահին գոյություն ունի Միություն երիտասարդական կազմակերպությունների (ՄԵԿ) նախաձեռնությունը, որ միավորում է 24 ՀԿ-ներ մեկ անձրևանոցի տակ: Այս նախաձեռնությունը կարելի է ավելի ընդլայները ու ազգային մակարդակում երկխոսություն հարթակ դարձնել:

Եզրակացություն 8

Երիտասարդական ոլորտում և մասնավորապես երիտասարդների մասնակցության խթանման իրավական ու քաղաքական փաստաթղթերի բացակայություն:

Առաջարկություն 17

Երիտասարդության մասին նոր օրենքի նախագիծը շրջանառելու փուլում մշակել հանրային քննարկումների հստակ ռազմավարություն՝ լայնորեն քննարկելով այն դաշտում առկա բոլոր շահառու խմբերի հետ: Օրենքի նախագիծն ընդունելուց հետո վերանայել ու շրջանառել Երիտասարդական պետական քաղաքականության ռազմավարության նախագիծը, կամ մշակել երիտասարդական քաղաքականության ոլորտի տեսլական ու չափանիշներ, որոնք հստակորեն կարտահայտեն պետության դիրքորոշումը երիտասարդական ոլորտի քաղաքականության վերաբերյալ:

Առաջարկություն 18

Համայնքային մակարդակում երիտասարդների մասնակցությունը խթանելու ու ՏԻՄ-երիտասարդներ կապի ստեղծումը անհատների կամ կազմակերպությունների բարի կամքին չթողնելու համար, 5-ամյա զարգացման պլաններում պարտադիր բաժիններ ունենալ, որոնք ուղղված կլինեն երիտասարդների հետ համագործակցությանն ու նրանց կարողությունների զարգացմանը: Սա կարող է համայնքային մակարդակում քաղաքականությունների միջոցով երիտասարդներին ու նրանց հետ համագործակցությանը աջակցող առաջին առաջին պարտադիր քայլերից մեկը լինել:

- Բացի համայնքային մակարդակում ու զարգացման պլանում դա ամրագրելը, առաջարկվում է Երիտասարդության մասին օրենքի նախագծում ամրագրել 5-ամյա զարգացման պլաններում երիտասարդության տեսլականի, այդ ոլորտի զարգացման ու բյուջեի մասով պարտադիր բաժիններ սահմանել և ներդնել:

Առաջարկություն 19

Մշակել երիտասարդության ներգրավման համար հարթակներ, որոնք կլինեն ավելի արդյունավետ ու մատչելի, չսահմանափակվել առկա սակավ թվով հարթակներով և փորձել նորարարական ու ստեղծագործ մեթոդներով հասնել երիտասարդների որոշումների կայացման գործընթացներում ներգրավելուն: Այս հարթակների ու մեխանիզմների միջոցով փորձել հասնել նրանց, ովքեր որոշակի պատճառներով այս գործընթացներից մշտապես դուրս են եղել:

Օրինակ՝ համալսարանների, ՏԻՄ-երի, միջին մասնագիտական ու արհեստագործակ կրթական հաստատությունների, ինչպես նաև համայնքային ու տեղական կազմակերպությունների հետ

համագործակցությունների արդյունքում՝ ստեղծել երիտասարդությանը վերաբերվող նախագծերի քննարկման առցանց ու անցանց ֆորումային հարթակ, որտեղ կտեղադրվեն նաև որոշակի հարցումներ, կարծիքի փոխանակման պատուհաններ, երիտասարդների տարբեր խմբեր ներառելու համար:

Եզրակացություն 9

Տեղական ու միջազգային կազմակերպություններ, կուսակցություններ

Քաղաքական մասնակցության վերաբերյալ թյուրըմբռնումների արդյունքում, երիտասարդների՝ քաղաքական գործընթացներում մասնակցություն ցուցաբերելու ցանկության ու մոտիվացիայի պակաս:

Առաջարկություն 20

Կազմակերպել դասընթացներ, որոնք միտված կլինեն խթանել ոչ միայն քաղաքացիական մասնակցությունը, այլ նաև քաղաքականը՝ զարգացնելով երիտասարդների գիտելիքն ու հմտությունները այդ մակարդակում ևս:

Առաջարկություն 21

Կուսակցական մակարդակում մշակել հստակ քայլեր երիտասարդների մասնակցությունը դեկորացիայից այլ մակարդակ տանելու համար: Կուսակցական մակարդակում ստեղծելկրթական ծրագրեր՝ երիտասարդների քաղաքական կրթությունն ապահովելու համար:

Վերլուծություն

Մաս 1.
«Ո՞վ է երիտասարդը»

Աշխարհում ներկայումս չկա մեկ հիմնական սահմանում «երիտասարդի» ու նրա տարիքային շեմի վերաբերյալ, այդ իսկ պատճառով Միավորված ազգերի կազմերպությունն իր փաստաթղթերում ու զեկույցներում սահմանում է երիտասարդին որպես անձ, որը գտնվում է 15-24 տարիքային միջակայքում՝ նշելով, որ, այնուամենայնիվ, ՄԱԿ անդամ պետություններն ազատ են ունենալու իրենց տեղական սահմանումները ևս[3]: Եվրոպական միությունը «երիտասարդ» է համարում 16-29 տարեկան անձանց[4]:

3. Youth, UN, https://bit.ly/3EWmjRL.
4. Youth - Overview, Eurostat, European Union, https://bit.ly/3Va3pgg.

Համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ ԿԳՄՍՆ) կողմից մշակված և 2021ի մայիսին ներկայացված «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025թթ. ռազմավարության» նախագծի. «երիտասարդ է համարվում Հայաստանի Հանրապետության 13-30 տարեկան (ներառյալ) քաղաքացին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող 13-30 տարեկան (ներառյալ) օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք՝ օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում»[5]: Այս սահմանման մեջ նշվում է նաև որոշակի տարիքային ենթախմբեր՝ 13-18 կամ 24-30: Ի տարբերություն նախորդ ռազմավարության, որտեղ երիտասարդ էր համարվում 16-30 տարեկան անձը, այս նախագծով այդ շեմն իջեցվել է՝ հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, այդ թվում նաև միջազգային փորձը (նշենք, որ 2011թ-ի մարդահամարի համաձայն՝ ՀՀ բնակչության մոտ 1/3-ը երիտասարդներ են (26.6%)[6]: Սակայն հարկ է նշել, որ ներկայիս և առաջարկվող փոփոխությունները հակասության մեջ են ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի հետ, որը երեխա է համարվում 0-18 տարեկան անձանց (ՀՀ-ն վավերացրել է այս կոնվենցիան 1993 թվականին): Իսկ վերոնշյալ երկու ռազմավարություններում երիտասարդների տարիքային շեմերը համընկնում են կոնվենցիայով սահմանվող երեխաների տարիքի հետ:

Երիտասարդները ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ այն հարցին, թե ովքեր են համարվում երիտասարդ, ոչ միայն նշում էին իրավական սահմանում՝ շեշտելով, որ նրանց համար երիտասարդ է 15-ից 30 տարեկան անձը, այլ նաև առանձնացնում էին մի շարք հատկանիշներ, որոնք կարևոր են երիտասարդի և մասնավորապես ակտիվ երիտասարդի համար:

5. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025թթ. ռազմավարության» նախագիծ, ԿԳՄՍՆ, 2021, էջ 9, https://bit.ly/3i7IjAq:

6. Մարդահամար 2011, https://bit.ly/3AKyPBC:

Ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցներից մեկը նշում է՝

> *«Տարիքն ընդհանրապես կապ չունի, այն մարդիկ, ովքեր կարող են իրենց ջանքն ու եռանդը ներդնել ինչ-որ խնդրի լուծման համար, նրանք էլ համարվում են երիտասարդ»:*

Մեկ այլ մասնակից առանձնացնում է՝

> *«Երիտասարդ է համարվում այն անձը, ով անընդհատ փորձում է ինչ-որ բան փոխել, ինչ-որ բանի հետ անհաշտ է ու խնդիրներ տեսնելիս չի լռում: Այլ հարց է, թե որքանով են գործադրած ջանքերը իրականություն դառնում կամ հաջողությամբ պսակվում»:*

Մեկ այլ երիտասարդ էլ շեշտում է՝

> *«Եթե չեմ սխալվում երիտասարդ է համարվում 15-ից 27 տարեկան անձը, բայց ուզում եմ նշել, որ դա ընդհանրապես կապ չունի, կարծում եմ, որ ինձ համար երիտասարդ է այն մարդը, ով նախաձեռնող է, ակտիվ, մոտիվացված ու բաց է նորարարության համար»:*

Այս սահմանումներից դուրս բերելով երիտասարդների հիմնական հատկանիշները կարելի է նշել, որ երիտասարդները հենց իրենց բնութագրելիս նշում են մի քանի հիմնական բնութագրիչներ, մասնավորապես՝ ակտիվություն, մոտիվացիա, անընդհատ փորձելու կարողություն, բացություն նորարարության նկատմամբ, ջանասիրություն: Սա գալիս է նաև ապացուցելու գրականության մեջ առկա այն ընդհանուր մոտեցումը, որ երիտասարդության հիմնական առանձ-

նահատկությունը կախվածությունից անցումն է անկախության[7]:

Համեմատելով ռազմավարության նախագծի տարբեր մասերի հետ՝ նկատում ենք, որ այս հատկանիշները օգտագործվում են նաև պետական մակարդակում, ավելին՝ 2022-ին երիտասարդների տոնը շնորհավորելիս ԿԳՄՍ նախարար Վ. Դումանյանը ևս նշել է, որ երիտասարդ են նրանք, ովքեր բաց են նորարարությունների ու փորձարարական գաղափարների առաջ[8]:

Այսպիսով համադրելով միջազգային փորձը, գրականությունը, տեղական իրավական դաշտն ու երիտասարդների կարծիքները, կարելի է եզրահանգել, որ ՀՀ-ում երիտասարդությունը ներառում է 13-ից կամ 15-ից 30 տարեկանների խումբը, որոնք ակտիվ են, մոտիվացված, նախաձեռնող ու նորարար:

Մաս 2.
Ի՞նչ է երիտասարդական մասնակցությունը.

ինչպիսի՞ մասնակցություն են երիտասարդներն ունենում որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործընթացներում

Մասնակցությունը բավականին բարդ և բազմաշերտ գաղափար է, որը համարվում է շարունակական գործընթաց, այլ ոչ մեկանգամյա գործողություն: Այն ժողովրդավարության հիմնասյուներից մեկն է, որը հնարավություն է տալիս համապատասխան երկրի քաղաքացիներին ունենալ ազդեցություն որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում (ուղղակի կամ անուղղակի կերպով): Երիտասարդությունը, որպես կախվածությունից անկախություն տանող խումբ, մասնակցային գործընթացներում ունի կարևորագույն դեր՝ այդիսկ պատճառով երիտասարդների/երիտասարդական մասնակցությունը դիտարկվում է ժողովրդավարական հասարակության բաղադրիչներից մեկը:

7. Մարդկային զարգացման ազգային զեկույց, ՄԱԶԾ, 2018/2019, էջ 28, https://bit.ly/3U690CU:

8. Վահրամ Դումանյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ, 12/08/2022, https://bit.ly/3GMbgMj:

Մի շարք միջազգային, տարածաշրջանային կազմակերպություններ փորձում են սահմանել երիտասարդների/երիտասարդական մասնակցությունը, օրինակ՝ «Տեղական և մարզային կյանքում երիտասարդների մասնակցության վերանայված եվրոպական խարտիայի» նախաբանի համաձայն. «Երիտասարդների ակտիվ մասնակցությունը տեղական և տարածաշրջանային մակարդակներում որոշումների կայացման մեջ էական է, եթե մենք ցանկանում ենք կառուցել ավելի ժողովրդավարական, ներառական ու բարգավաճ հասարակություններ: Ցանկացած համայնքի ժողովրդավարական կյանքին մասնակցելը ավելին է, քան քվեարկելը կամ ընտրություններին մասնակցելը, թեև դրանք կարևոր տարրեր են: Մասնակցությունը և ակտիվ քաղաքացիությունը նշանակում է ունենալ իրավունք, տարածք, ռեսուրսներ ու հնարավորություն և, անհրաժեշտության դեպքում, աջակցություն՝ մասնակցելու և ազդելու որոշումների կայացմանը, ինչպես նաև գործողություններին, որոնք նպաստում են ավելի լավ հասարակության կառուցմանը:»[9] Այս սահմանումից պարզ է դառնում, որ երիտասարդական մասնակցությունը միայն ընտրությունների մասնակցությունը չէ, ինչպես արդեն նշվել է այն բազմաշերտ է ու ներառում է սոցիալական ու մշակութային, ինչպես նաև քաղաքական, քաղաքացիական ու տնտեսական մասնակցություն:

Երիտասարդական մասնակցության վերաբերյալ ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ հնչել են բազմաթիվ կարծիքներ, որոնց մի մասն ամփոփում է վերոնշյալ սահմանումը, իսկ մյուս մասն ուղիղ կապված է երիտասարդի սահմանման հետ:

Երիտասարդներից մեկը նշում է.

> *«Կարծում եմ, որ մասնակցության ուղիղ տեսակ ու օրինակ ենք մենք, որ չնայած համայնքը թողնելու և հեռանալու հնարավորություններին, ընտրել ենք մնալ համայնքում ու ծավալել որոշակի գործունեություն տարբեր ոլորտներում»:*

9. Revised European Charter on the Participation of Young People, in Local and Regional Life, Council of Europe, 2015, preamble, https://bit.ly/3U6jWQH.

Մեկ այլ մասնակից էլ նշում է՝

> *«Երիտասարդական մասնակցությունն ինձ համար բաժանվում է երկու հիմնական տեսակի.*
>
> - *Ուղիղ - երբ նշված տարիքային խմբի ներկայացուցիչները ակտիվորեն գործունեություն են ծավալում համայնքային ու երկրի կյանքում սկսած ընտրություններից, հանրային լսումներից, մինչև կամավորական աշխատանք ու նախաձեռնություններ:*
> - *Անուղղակի - երբ կամա, թե ակամա տվյալ անհատը կամ խումբը մասնակից է դառնում որոշակի գործընթացների՝ ասենք մասնակցում է դասընթացի, որովհետև նրան խնդրել են, գնում է որևէ միջոցառման, որովհետև իր բարեկամն է կազմակերպել և այլն»:*

Ի հավելումն սրան, մասակիցներից մյուսը շեշտում է՝

> *«Ես կավելացնեի նաև խառը տեսակը, երբ օրինակ երիտասարդը ակտիվորեն որոշակի գործընթացների է մասնակցում, նախաձեռնում կամ կազմակերպում է որոշակի միջոցառումներ, քայլեր, բայց կիսատ է թողնում հանգամանքներից կամ մոտիվացիայի պակասից ելնելով:»:*

Համաձայն երիտասարդների՝ մի կողմից մասնակցությունը սեփական համայնքի կյանքին տարբեր ձևաչափերով մասնակցելն ու տարբեր ոլորտներում գործունեություն ծավալելն է, որը, մյուս կողմից, տեղավորվում է մյուսների նշած եռամակարդակ (ուղիղ, անուղղակի և խառը) մասնակցային աստիճանի ուղղակի և խառը աստի-

ճաններում: Հետաքրքրական է, որ այս սահմանումներում նշված մասնակցային եռաստիճան համակարգը համընկնում է ԿԳՄՍ նախարարության երիտասարդական ռամզավարության նախագծի «մասնակցության» սահմանման հետ, ըստ որի. «մասնակցությունը ենթադրում է հանրային կյանքի բոլոր ոլորտներում որոշումների կայացման գործընթացներում երիտասարդների, երիտասարդական ակտիվ խմբերի անմիջական և միջնորդավորված (երիտասարդական ՔՀԿ-ների միջոցով) ներգրավվածություն: Լիիրավ մասնակցության ապահովման տեսլականը ենթադրում է տեղեկացվածությունից անցում դեպի նախաձեռնողականության ցուցաբերում և ներգրավվում՝ քաղաքականություն մշակողների հետ համատեղ որոշումների կայացման համար»[10]:

Ըստ այս սահմանման, նախարարության տեսլականներից մեկը երիտասարդների անուղղակի մասնակցությունից անցումն է ուղղակի մասնակցության, որն էլ իր հերթին տարբեր մակարդակներում կարող է դրսևորվել երիտասարդների նշած եռամակարդակ աստիճանակարգով: Այնուամենայնիվ, ամենաարդիական հարցն է՝ որքա՞ն բաց, մասնակցային կամ ուղիղ կլինի որոշումների կայացման գործընթացը նախարարության, ՏԻՄ-երի կամ երիտասարդական կազմակերպությունների կողմից:

Փորձագիտական հարցազրույցների ընթացքում երիտասարդական ոլորտում գործունեություն ծավալած փորձագետներից ոմանք նշել են, որ ներկայումս երիտասարդները հիմնականում Հարթի աստիճանակարգի առաջին երեք մակարդակներում են՝ նշանակում է նրանց մանիպուլացնում են, օգտագործում են որպես դեկորացիա և ստեղծում են մասնակցային գործընթացների իմիտացիա (Հարթի աղյուսակը տես ներդիրում)[11]:

10. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025թթ. ռազմավարության» նախագիծ, ԿԳՄՍՆ, 2021, էջ 8, https://bit.ly/3i7IjAq:

11. Երիտասարդահեն Զարգացման Ուղենիշներ, ԿԱՀԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017, էջ 8, https://bit.ly/2OLACf9:

Փորձագետներից մեկը նշում է՝

> *«Լայն առումով, այսօր երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանն ու քաղաքականությունների մշակմանը կարող է դիտարկվել տոկենիզմի մակարդակում»:*

Սա նշանակում է, որ երիտասարդները հիմնականում հրավիրված են լինում մասնակցելու «մեծահասակների» կազմակերպած գործողություններին ու աշխատանքներին՝ չունենալով որևէ ազդեցություն որոշումների կայացման ու գործողությունների ծավալման մեջ: Իսկ ավելի վատթարագույն իրավիճակներում երիտասարդներին ընդհանրապես կարևորություն չի տրվում:

Քանակական հետազոտության ընթացքում երիտասարդները այն հարցին, թե ինչպես են պատկերացնում «երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում», հիմնականում նշել են երիտասարդի արտահայտած կարծիքի ազդեցություն որոշումների կայացման մեջ (47.3%), երիտասարդների ներգրավվածություն հասարակական/քաղաքական կառույցներում (6.8%), երիտասարդների մասնակցություն համայնքային կյանքին (21.5%) ու երիտասարդների կողմից նախաձեռնությունների մշակում և իրականացում (5.8%):

Պատկեր 1.

Ի՞նչ եք հասկանում «երիտասարդների մասնակցությունն որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում» կապակցությունն ընթերցելիս:



Այս պատասխաններից երեքը համընկնում են Հարթի մասնակցության աստիճանակարգի վերջին երեք աստիճանների՝ համատեղ որոշումների կայացման, ինքնուրույնության ու համագործակցության հետ: Այնուամենայնիվ, փորձագետները շեշտում են, որ այժմ երիտասարդներն ունեն ավելի մեծ պոտենցիալ ու ավելի բաց են քան մի քանի տարի առաջ, սակայն որոշակի խնդիրներից ելնելով հատկապես ավելի մեծ տարիքի երիտասարդները, չեն կարողանում ավելի ակտիվ մասնակցություն ունենալ որոշումների կայացմանն ու քաղաքականությունների մշակմանը:

Այս խնդրից խոսելիս փորձագետներից մեկը նշում է՝

> *«Ի համեմատություն նախորդ տարիների՝ երիտասարդները հիմա ավելի ակտիվ են, համարձակ ու պատասխանատու: Այսօրվա երիտասարդությունը միանշանակ ավելի մեծ պոտենցիալ ունի, սակայն տնտեսական ու սոցիալական խնդիրները նպաստում են, որ այդպոտենցիալը այդպես էլ չօգտագործվի:»*

Փաստորեն բացի այն, որ տեղեկատվության, համագործակցության, երկխոսության հստակ խնդիր կա տարբեր մակարդակներում երիտասարդներին մասնակցային գործընթացներում ներառելու համար, խնդիր է նաև այն, որ երիտասարդությունն այսօր բացի մասնակցայնությունն ունի մի շարք սոցիալական ու տնտեսական խնդիրներ, որոնք ազդում են նրա կյանքի որակի վրա թե՛ որպես քաղաքացի՝ մասնակցության, թե՛ որպես անհատ՝ ամենօրյա կյանքի տեսանկյունից:

Բացի այն, որ երիտասարդական մասնակցությունը համարվում է միջազգային ու տարածաշրջանային կազմակերպությունների ու պետությունների օրակարգային խնդիրներից մեկը, հարկ է նշել, որ այն նաև իրավունք է, որն ամրագրված է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում: Օրինակ՝ Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին դաշնագրում ամփոփված են կարծիքի ազա-

տությունն ու խաղաղ հավաքներին մասնացկելու իրավունքները, ինչպես նաև ընտրության իրավունքը: Մեկ այլ փաստաթղթում՝ Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի 12-ից 14-րդ հոդվածներում հիմնականում նշվում է, որ երեխաներն ունեն իրենց կարծիքը ազատ արտահայտելու, ինչպես նաև տեղեկատվություն որոնելու ու տարբեր ֆորմատներով դրանք ստանալու, ինչպես նաև խաղաղ հավաքների մասնակցելու ու միավորումների անդամակցելու իրավունք[12]: Իսկ Եվրոպայի խորհրդի մի շարք փատաթղթեր դիտարկում են 18-ից ցածր երեխաների ու երիտասարդների մասնակցության խթանումը և դրա համար անհրաժեշտ համապատասխան հարթակների ու վայրերի ստեղծումը՝ մշակելով նաև մասնակցության խթանման ու գնահատման համար ձեռնարկներ (սրան զուգահեռ արդեն իսկ խոսվեց տեղական ու տարածաշրջանային մակարդակում երիտասարդների մասնակցության խարտիայի մասին:):

Մաս 2.1: Քաղաքացիական մասնակցության իրավիճակային վերլուծություն

Այս բաժնում քաղաքացիական մանսակցությունը դիտարկվելու է երկու հիմնական աստիճաններում՝ երիտասարդների ներգրավվածությամբ կամ մասնակցությամբ համայնքային ու պետական մակարդակում որոշումների կայացմանը, քաղաքականությունների մշակմանն ու համայնքում գործունեության ծավալմանը:

Համայնքային մակարդակ

Համայնքային կյանքում երիտասարդության մասնակցության ապահովումը համարվում է անհատի՝ որպես քաղաքացի, զարգացման ամենակարևոր մակարդակներից մեկը, որում նաև կարողանում է զարգացնել իր հմտությունները՝ սեփական ու միջավայրի կարիքների հիմքով վեր հանել խնդիրներ և փորձել դրանք լուծել սեփական կամ համայնքային կարողություններով, ձևավորում է պատաս-

12. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, ՄԱԿ, 1989, https://bit.ly/3XxslQ9:

խանատվություն սեփական համայնքի ու նախաձեռնությունների նկատմամբ: Համայնքային կյանքում մասնակցությունը սկսվում է դեռևս դպրոցական տարիներին, յուրաքանչյուր հաջող փորձ կարող է ոգեշնչել երիտասարդին, իսկ անհաջող փորձերի դեպքում հավանականությունը մեծ է, որ երիտասարդն այլևս նախաձեռնողականություն չի դրսևորի:

Մասնակցային գործընթացները համայնքային մակարդակում չեն սահմանափակվում միայն երիտասարդների կողմից համայնքի համար որոշակի ծրագրերի կամ գործողությունների կատարմամբ: Սակայն նույնիսկ ծրագրերի կատարման համար, երիտասարդները տարբեր տեսակի աջակցության կարիք են ունենում, սրա մասին խոսում է փորձագիտական հարցազրույցներից մեկի մասնակիցը.

> *«Եթե համայնքում կան հասարակական կազմակերպություններ կամ այդ կազմակերպությունների ներկայացուցիչներ, ապա նրանք համարվում են կատալիզատորներ, որպեսզի երիտասարդները ներգրավվեն համայնքային կյանքին կամ կատարեն համայնքային ծրագրեր: Եթե այդպիսի կազմակերպություններ չկան, ապա բարդ է ասել, թե երիտասարդների ինչ մասնակցություն կունենանք»:*

Կարևոր է, որ երիտասարդները անմասն չլինեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցելու, նրանց աշխատանքներում ներգրավվելու, սեփական նախաձեռնություններով այս մարմինների հետ աշխատելու ու որոշումների կայացման գործընթացում իրենց ազդեցությունն ունենալու հնարավորություններից: Սակայն ներկայումս վերոնշյալ գործընթացները բազմաթիվ թյուրըմբռնումների տեղ են տալիս ու ամենատարածված սխալներից մեկը թերևս խորհրդակցությունը որպես իրական մասնակցության ներկայացնելն ու դրանց միջև տարբերությունները չհասկանալն է: Տարբեր մտածողներ նշում են, որ համայնքային կյանքում մասնակ-

ցությունը համայնքում ակտիվ դեր զբաղեցնելն ու դրա միջոցով որոշումների կայացման գործընթացներում փոփոխությունների հասնելն ու դրանց նկատմամբ վերահսկողություն ունենալն է (հիմնականում այս ազդեցությունը դրսևորվում է հավաքական գործողություններ ձեռնարկելով): Ի հակադրություն սրա, խորհրդակցությունը տեղեկատվության փոխանակումն է, որը կարող է հանգեցնել կամ չհանգեցնել որոշակի փոփոխության13:

Քանակական տվյալների վերլուծության արդյունքում, այն հարցին, թե որոնք են համայնքային կյանքին երիտասարդության մասնակցությանը խանգարող հանգամանքները, հարցվողների 30.4% նշել է համայնքապետարանի ու երիտասարդների միջև համագործակցության պակասը, իսկ 4.3% նշել է, որ համայնքի կողմից մերժվում են նոր ծրագրերը, մյուս հանգամանքը ըստ հարցվածների 21.7%-ի երիտասարդների ներգրավմանն ուղղված ծրագրերի ու կազմակերպությունների պակասն է, որն էլ գալիս է ապացուցելու, որ համայնքային մակարդակում ՏԻՄ-երիտասարդներ կապի ու համագործակցության պակաս կա (տես Պատկեր 2-ում):

Պատկեր 2.

Որո՞նք են Ձեր համայնքում երիտասարդության մասնակցությանը խանգարող հանգամանքները և/կամ գործոնները:



13. Definition of Participation, (Part of 2004 Report "Designing Social Capital Sensitive Participation Methodologies"), 2004, https://bit.ly/3gyTbql.

Փորձագետներն ևս փաստում են, որ սովորաբար համայնքային մակարդակում երիտասարդների մասնակցությանը խոչընդոտող հանգամանքներից մեկը հաղորդակցության մեթոդների ոչ արդյունավետ ու արդիական լինելն է, որի արդյունքում մի կողմից երիտասարդները բավարար չափով չեն տեղեկանում ՏԻՄ-երի գործունեության մասին, մյուս կողմից էլ ձախողվում է ստեղծել երիտասարդ-ՏԻՄ համագործակցություն, որն էլ հանգեցնում է երիտասարդների շրջանում ՏԻՄ-երի նկատմամբ վստահության պակասի:

Փորձագետներից մեկը նշում է.

> *«ՏԻՄ-երում երիտասարդների մասնակցության գործիքների վերաբերյալ տեղեկատվության, գիտելիքի ու հմտության պակաս կա՝ ավագանու նիստը օնլայն հեռարձակելը, դեռևս մասնակցություն ապահովել չէ, քանի որ այդ նիստերին առցանց մասնակցում են միայն համայնքապետարանի աշխատակիցները, որոնք ի պաշտոնե պետք է մասնակցեն»:*

Փորձագետներից մյուսը նշում է.

> *«Եթե համայնքում հասարակական կազմակերպություններ չգործեն, բարդ է ասել, թե երիտասարդներն ընդհանրապես տեղեկացված կլինեն ՏԻՄ գործառույթներից, ավագանու նիստերից կամ ընդհանրապես կմասնակցեին նույն նիստերին ու պահանջեին, որ դրանց մասին տեղեկատվությունը լինի բաց ու հասանելի բոլորի համար»:*

Թե՛ ՏԻՄ-երի, թե՛ երիտասարդների շրջանում կրթության և իրազեկվածության պակասը հանդիսանում է մասնակցությանը խոչընդ-

դոտող հանգամանքներից մյուսը: Չնայած որ քանակական տվյալների ու ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում պարզ է դառնում, որ երիտասարդների համար կրթությունը հիմնականում ունենում է դրական ազդեցություն համայնքային կյանքում ու որոշումների կայացմանը մասնակցություն ունենալու տեսանկյունից: Սակայն, թե՛ փորձագետները, թե՛ երիտասարդները նշում են, որ կրթության՝ գիտելիքի ու հմտությունների պակաս կա, թե՛ ՏԻՄ աշխատակիցների, և թե՛ երիտասարդների շրջանում: Կրթության մեջ էլ երկու հիմնական ուղղություն առանձնացվեց փորձագետների կողմից՝ 1.ո՞վքեր են դասավանդում կամ փորձում կրթել երիտասարդներին, 2. ի՞նչ մոտեցումներ ու արժեքներ են նրանք փորձում տարածել:

Փորձագետներից մեկը նշում է.

> *«Ֆորմալ կրթության մեջ կան մեխանիզմներ, որոնք փորձում են ապահովել երիտասարդների մասնակցությունը, ինչպես օրինակ հասարակագիտություն առարկան, աշակերտական խորհուրդները, որոնք ընտրությունների ու պատասխանատվության ստանձման առաջին օղակն են, սակայն էլի այս ամենի արդյունավետ կիրառումը ունի շատ տեղայնացված բնույթ: Ստացվում է, որ որոշ դեպքերում այս կառույցն արդյունավետ է գործում, որոշներում՝ ոչ: Սակայն կրթական նոր բարեփոխումները մասնակցությունը դիտարկում են 8 հիմնական կարողունակությունների մակարդակում, որն ավելի արդյունավետ մոտեցում կարող է ապահովել»:*

Քանակական տվյալները ևս փաստում են այն մասին, որ երիտասարդները կարևորում են կրթության ազդեցությունը, ըստ Պատկեր 3-ի, հարցվածների 52%-ը միանշանակ համաձայն ու 42%-ը համաձայն է, որ կրթությունը, որոշումների կայացման ու քաղաքականութ-

յունների մշակման գործում, երիտասարդների մասնակցության համար, ունի կարևոր նշանակություն:

Պատկեր 3.

Համայնքային մակարդակում՝ որոշումների կայացման ու քաղաքականությունների մակման գործում, երիտասարդների մասնակցության համար կրթությունն ունի կարևոր նշանակություն:



Մյուս կարևորը խնդիրը, որ երբեմն բխում է հենց կրթության պակասից, համայնքներում կարծրատիպային մտածելակերպի առկայությունն է: Երբեմն կարծրատիպերն ունենում են նաև գենդերային հիմք՝ ամփոփելով այնպիսի գաղափարներ ինչպիսիք են՝ «աղջիկը չի կարող ակտիվ լինել, ամոթ է», «դու հո գործ տվող չես», «մեր բարեկամը համայնքապետարանում է աշխատում, ուզում ես վրան խոսակցություն գա»: Երբեմն այս կարծրատիպերը ավելի ընդհանրական են ու վերարտադրվում են մեծահասակների կողմից՝ «թող երիտասարդները խոսեն ու գործեն, մենք արդեն մեծ ենք», «Էլի երիտասարդները աղմուկ են բարձրացնում, միայն խնդիրներ սարքել գիտեն» և այլն:

Երիտասարդները ՀՀ տարբեր համայնքներից նշում էին, որ երբեմն իրենց համար բարդ է լինում առկա կարծրատիպային միջավայրում որոշակի գործունեություն ծավալելը, քանի որ յուրաքանչյուր նոր նախաձեռնություն հանդիպում է ընդդիմության:

Երիտասարդներից մեկը նշում է.

> *«Երբեմն ասում են աղջիկ ես, ամոթ է, մնա տանը: Երբեմն երբ փորձում ենք ինչ-որ միջոցառում կազմակերպել ու ակնկալում ենք մեծահասակների աջակցությունը, ասում են, որ երիտասարդը մենք ենք ու մենք են պատասխանատու դրա համար: Սակայն իրականում ձեռքերը լվանում են և սպասում, որ սայթաքենք»:*

Մեկ այլ երիտասարդ գենդերային կարծրատիպերից խոսելով նշում է.

> *«Եղել է, որ փորձել ենք շաբաթօրյակ կազմակերպել ու համայնքի տղաների մի մասն ասել է, որ տղան չպետք է մաքրությամբ զբաղվի: Ոմանք էլ եկել կանգնել են, հեռվից հետևել ու ծիծաղել մասնակցող տղաների վրա»:*

Մեկ այլ փորձագետի հետ զրույցում, վերջինս նշեց՝

> *«Աղջիկները նույնպես բախվում են կարծրատիպերի, որոշակի մակարդակից հետո ընտանիքը կարող է արգելել աղջկան ակտիվ մասնակցություն ունենալ համայնքային կյանքին»:*

Փորձագետները նաև նշում են, որ երբեմն հենց պետության կողմից նկատվում է կարծրատիպային վերաբերմունք երիտասարդների նկատմամբ, որի արդյունքում էլ երիտասարդներն անլուրջ են ընդունվում: Սրա արդյունքում էլ տարբեր մակարդակներում երիտասարդներին դիտարկում են որպես ուղղակի բողոքողներ և/կամ խումբ, որը կարող է լինել դեկորացիա՝ առանց որևէ ազդեցության:

Ի հակադրություն սրա, փորձագետները նշում են, որ չնայած երիտասարդները օգտագործվում են որպես դեկորացիա, նրանք ավելի մեծ պոտենցիալ ունեն, բայց այդ պոտենցիալն այդպես էլ չի օգտագործվում:

Փորձագետներից մեկը նշում է.

> *«Երիտասարդները երբեմն ունենում են շատ ավելի մեծ պոտենցիալ կրթության ու հմտությունների տեսանկյունից, սակայն լավ փորձերը չեն հանրայնացվում, օրինակ, թե ինչ գործունեություն են ծավալում երիտասարդները իրենց համայնքերում, ինչի արդյունքում էլ որոշակի կարծրատիպեր են ձևավորվում: Դրա փոխարեն օրինակ, քրեական մշակույթը մեծ ազդեցություն է ունենում տղաների ակտիվ քաղաքացիության վրա՝ խտրականացնելով նրանց, ովքեր փորձում են ակտիվ լինել համայնքում»:*

Ակտիվ երիտասարդների շրջանում ամենից շատ հանդիպող հաջորդ երևույթը խնդիրները բարձրաձայնելն ու դրա հետևից չգնալն է: Փորձագետները նշում են, որ որոշակի դեպքերում երիտասարդները պատրաստ են բարձրաձայնել խնդիր, առաջարկել լուծման քայլեր, ինչպես նաև աջակցել լուծման գործընթացին, սակայն երբեմն նրանց կարողություններն ու մոտիվացիան սահմանափակվում է խնդիրները բարձրաձայնելով:

Հարցազույցի ընթացքում փորձագետներից մեկը նշում է՝

> *«Երբեմն հասարակական կազմակերպությունները համայնքներում բնավ պարտադիր բնույթ չեն կրում, նրանք կարող են որոշակի կրթություն ապահովել ու նույնիսկ կամուրջ չհանդիսանալ համայնք-երիտասարդություն համագործակցության համար: Այս երիտասարդները միայն տեղեկատվության պակաս ունեն: Կան երիտասարդներ, որոնք տեղեկատվության ստացումից հետո պատրաստակամ են համագործակցել՝ միայն խնդիրները բարձրաձայնելու մակարդակում: Սակայն մենք տեսել ենք նաև օրինակներ, երբ երիտասարդները ոչ միայն բարձրաձայնում են խնդիրը, այլ նաև հետևողական են ու աջակցում են դրա արդյունավետ լուծմանը: Այս տարբերակում խնդիրն այլ է, թե որքան բաց են ՏԻՄ-երը»:*

Ֆոկուս խմբային քննարկումների ու քանակական տվյալների վերլուծության արդյունքում, համագործակցության պակասի կարևորագույն խնդիրներից մեկն այն է, որի ՏԻՄ-երը պատրաստակամ չեն տարբեր ձևաչափերով համագործակցել երիտասարդների հետ:

Քննարկումներից մեկի մասնակիցը նշում է՝

> *«Եղել են դեպքեր, որ փորձել ենք, որոշակի հարցերով դիմել համայնքապետարան, բայց պատասխանները հիմնականում խուսափողական են եղել՝ երբեմն ռեսուրս չկա, երբեմն ուղղակի դրա ժամանակը չէ, երբեմն երիտասարդ ենք ու չենք հասկանում հարցի լրջությունը»:*

Մեկ այլ մասնակից էլ իր փորձից ելնելով ընդգծում է՝

> *«Ես չեմ պատկերացնում, որ ինձ կարող են ինչ-որ բանով օգնել ՏԻՄ-ում, բայց նաև շատ կցանկանայի, որ չփորձեին խանգարել»:*

Փորձագետները ևս նշում են՝

> *«Շատ բաներ կախված են ՏԻՄ-երի ցանկությունից ու պատրաստակամությունից՝ համագործակցելու այս կամ այն հարցի վերաբերյալ: Կազմակերպությունները կարող են մեծ ռեսուրսներ ներդնել համայնքում, բայց վերջում, երբ գործը հասնի ՏԻՄ-երին, գործընթացը մտնի փակուղի»:*

Կարևոր է նշել, որ եթե երիտասարդները ցուցաբերում են հետևողականություն որոշակի խնդրի լուծման պարագայում, ապա հավանականությունը բավականին մեծանում է, որ այդ խնդիրները կստանան լուծումներ: Մինչ այս երիտասարդների շրջանում ամենից տարածված հիմնական խնդիրները, որոնք նաև ստացել են որոշակի լուծումներ եղել են բնապահպանական, այդ թվում նաև համայնքներում աղբահանության հետ կապված խնդիրներ, տրանսպորտի (միջհամայնքային, համայնքները կապով ու դեպի մայրաքաղաք), երիտասարդների համար ժամանցային վայրերի բացակայության վերաբերյալ:

Փորձագետների պնդմամբ, այս հարցերը որոշ դեպքերում մեծ ջանքեր չեն պահանջում, երբեմն հանրային ճնշումը միայն բավարար է, ու երիտասարդները վերջին տարիներին օգտագործում են սոցիալական ցանցերը ու դրանց միջոցով ՏԻՄ-երի վրա ճնշում գործադրելու մեթոդը, որի արդյունքում ակնհայտ փոփոխություններ են տեղի ունենում: Սրա արդյունքում որոշ դեպքերում ՏԻՄ-երը գնում են

երկխոսության ու կապ ստեղծում երիտասարդների հետ, մի կողմից խույս տալով հանրային պարսավանքից, մյուս կողմից ստանալով հնարավորություն ուղիղ տեղեկատվության միջոցով արագ արձագանքել խնդրին:

Փորձագետներից մեկը նշում է, որ գյուղական և քաղաքային համայնքներում երիտասարդների շրջանում համայնքի նկատմամբ սեփականատիրության զգացումը տարբերվում է, և հատկապես փոքր համայնքներում երիտասարդները ավելի կապված են իրենց համայնքին՝ ինչն էլ գուցե համայնքային մասնակցությանը խթանող գործոններից մեկն է: Միևնույն ժամանակ սակայն, ուրբանիզացիայի արդյունքում փոքր կամ գյուղական համայնքներից դեպի քաղաք ներքին միգրացիան մեծապես խոչընդոտում է երիտասարդության շրջանում որոշակի համայնքներում որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում մասնակցություն ունենալուն:

Համայնքապետարանների համագործակցայնության հետ կապված մեկ այլ խնդրի՝ մեկ կամ մի քանի անձերի կողմից համայնքապետարանի հաջողումը՝ կառույցի համակարգային արդունավետ գործարկման բացակայության համատեքստում, անդրադարձել են հետազոտությանը մասնակցած գրեթե բոլոր փորձագետները: Պետական ու հասարակական ոլորտի փորձագետները նշում էին, որ համայնքային մակարդակում ՏԻՄ-երի գործունեության որակն ուղիղ կապված է տվյալ համայնքի ղեկավարից և աշխատակիցներից, եթե որոշ աշխատողներ կամ հենց համայնքապետը դուրս է գալիս աշխատանքից կամ պաշտոնի փոփոխություն է տեղի ունենում, կառույցի համագործակցայնությունը ուղղակիորեն կապված է լինում փոփոխությունների հետ: Այս ամենից խույս տալու համար առաջին հերթին անհրաժեշտ է իրավական կարգավորումների ու քաղաքականությունների միջոցով կայացնել ՏԻՄ-երը՝ մտածելով այնպիսի մեխանիզմներ, որոնք կգործարկեն կառույցը՝ զերծ մնալով յուրաքանչյուր փոփոխության արդյունքում առաջ եկած վայրիվերումներից:

Փորձագետը նշում է՝

> *«Մեզ անհրաժեշտ են ինստիտուտներ ու համակարգեր, որոնք մեկ անձից կախված չեն: Եվ չեն ձախողի յուրաքանչյուր կադրային փոփոխության պատճառով: Նույնիսկ փոփոխությունների դեպքում, պետք է հստակ իմանալ, որ կառույցի համագործակցայնությունը, ներառականությունը, հաշվետվողականությունն ու թափանցիկությունը չեն պակասի»:*

Քանակական տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ չնայած շատ համայնքապետարանների հետ աշխատանքը կախված է անհատներից, բայց փաստաթղթերի մշակման ու դրանց ընթացքում երիտասարդների ներգրավման գործընթացները մի կողմից ոչ մասնակցային չեն, իսկ մյուս կողմից երիտասարդի կրթությունը չի մոտիվացնում վերջինիս մասնակցել այդ գործընթացին:

Պատկեր 4-ում ցույց է տրվում է, որ երիտասարդների 71%-ն ընդհանրապես չի մասնակցել համայնքի «5-ամյա զարգացման ծրագրի» և/կամ «տարեկան զարգացման պլանի» քննարկումներին:

Պատկեր 4.

Մասնակցե՞լ եք համայնքի «5-ամյա զարգացման ծրագրի» և/կամ «տարեկան զարգացման պլանի» քննարկումներին:



Այսպիսով, համայնքային մակարդակում երիտասարդները դեռևս հանդիպում են բազմաթիվ խոչընդոտների՝ որոշումների կայացմանն ու քաղաքականությունների մշակման գործընթացներում մասնակցություն ունենալու համար: Երբեմն խնդիրներ են առաջանում, նույնիսկ, միջոցառումներ կազմակերպելու կամ համայնքում գործունեություն ծավալել փորձելու ընթացքում: Սրան մի կողմից նպաստում են համայնքապետարանների ոչ բաց գործելակերպերն ու հստակ մեխանիզմների պակասը, մյուս կողմից թե՛ ՏԻՄ աշխատակիցների, թե՛ երիտասարդների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների բացը:

ՏԻՄ-երի հետ համագործակցության փոփոխության ու բարելավման տեսանկյունից երիտասարդները քանակական հարցաթերթերի լրացման արդյունքում առանձնացրել են փոփոխության ենթակա հետևյալ 5 առաջարկությունները (տես Պատկեր 5).

Պատկեր 5.

Ի՞նչը կփոխեիք համայնք-երիտասարդներ համագործակցության մեջ:



Ինչպես տեսնում ենք երիտասարդների ու համայնքապետարանների աշխատակիցների կարողությունների զարգացումը գտնվում է երիտասարդների ուշադրության կենտրոնում ևս: Սակայն մյուս կողմից էլ տեղեկատվության աստիճանի խնդիրն ու դրա բարձրացումը կարևորվում է բոլոր մակարդակներում:

Պետական մակարդակ

Պետական մակարդակում երիտասարդների՝ որոշումների կայացմանն ու քաղաքականությունների մշակմանը մասնակցությունն ավելի լայն ու բազմաշերտ խնդիրների է հանդիպում: Մի կողմից խնդիրներից շատերը նման են համայնքային մակարդակում առկա խնդիրներին, մյուս կողմից դրանց չափերն ավելի մեծ են: Ինչպես համայնքային, այնպես էլ ազգային մակարդակում տեղեկատվության հասանելիության խնդիրն ակնառու է:

Փորձագետներից մեկը նշում է պետական մակարդակում ևս տեղեկատվությունը երիտասարդներին հասանելի դարձնելու մեծ խնդիր կա: Փորձագետներն ու ֆոկուս խմբային քննարկումների մասնակիցները նշում էին, որ հիմնականում ոչ ուղղակի կամ միջնորդավորված (տեղական ՀԿ-ների ու միջազգային կազմակերպությունների ցանցերի անդամ լինելու արդյունքում) ձևով են մասնակցել ԿԳՄՍ նախարարության կողմից կազմակերպված հանրային քննարկումների կամ երիտասարդական ֆորումների:

> *«Պետական կամ ազգային մակարդակներում իրազեկումը բավարար չափով չի իրականացվում, եթե օրինակ տարբեր կազմակերպություններ չփորձեն համագործակցել նախարարության կամ այլ պետական կառույցների հետ ու կիսել տարբեր միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը երիտասարդների հետ, ապա տեղեկատվական հստակ բաց ու խզում կգոյանա պետության ու երիտասարդների միջև»:*

Պետական մակարդակում երիտասարդական մասնակցության վերաբերյալ փորձագետներից մեկը նշում է՝

> *«Պետական կամ ազգային մակարդակում երիտասարդական մասնակցությունն ապահովվում է միջնորդավորված՝ տարբեր կազմակերպությունների միջոցով: Տարբեր քաղաքականություններ մշակելիս ու այդ գործընթացներին մասնակցելիս այս կազմակերպություններն են (լինի դա տեղական, թե միջազգային) ներգրավում երիտասարդներին: Անկեղծ լինեմ, որ սպասենք, որ երիտասարդն ինքը կմտնի տարբեր օրենսդրական նախագծերի վերաբերյալ համապատասխան հարթակներում կարծիք կարտահայտի, շատ եզակի երևույթ է»:*

Ի հակադրություն սրա, քանակական հետազոտության արդյունքների համաձայն, հարցմանը մասնակցած երիտասարդների 83%-ը չի մասնակցել պետական կառույցների կողմից կազմակերպված որևէ քննարկման, իսկ 72.6%-ը չի մասնակցել երիտասարդների հիմնախնդիրների վերաբերյալ քննարկումների: Մասնակցողներից շատերը նշել են, որ հենց տեղական ու միջազգային կազմակերպությունների միջոցով են մասնակցություն ունեցել այս գործընթացներում: Սա գալիս է ապացուցելու, որ պետություն-երիտասարդություն շղթայում կապող են մնում տարբեր կազմակերպությունները:

Որպես այս խնդրի շարունակություն՝ փորձագետներն ու երիտասարդները խոսում էին այն երիտասարդների մասին, ովքեր որևէ կազմակերպության կամ նախաձեռնության անդամ չեն: Այս երիտասարդները հանրային քննարկումներին ու ֆորումներին մասակցելու տեսանկյունից գտնվում են ոչ բարենպաստ պայմաններում: Ավելին, այն երիտասարդները, որոնք արդեն իսկ բախվում են սոցիալ-տնտեսական խնդիրների, կամ ունեն հաշմանդամություն ու որևէ կառույցի անդամ չեն, ուղղակի հնարավորություն չեն ունենում իրենց ձայնն ու խնդիրները բարձրացնել:

Փորձագետներից մեկը նշում է՝

> *«Եթե կազմակերպություններին անդամակցող կամ համակրող երիտասարդներն ունենում են հնարավորություն մասնակցելու պետական կառույցների կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումների, քանի որ այդ կազմակերպությունը համագործակցում է նախարարությունների կամ տարբեր պետական կառույցների հետ, ապա նրանք ովքեր որևէ կազմակերպության անդամ չեն, հիմնականում այդպիսի հնարավորություններից զուրկ են լինում»:*

Փորձագետներից մյուսը ընդգծում է՝

> *«Կարևոր է ընդունել, որ կան երիտասարդներ (ու դրանք շատ են), որ բոլոր տեսակի գործընթացներից դուրս են: Կարծում եմ՝ պետական կառույցները այս երիտասարդների հետ աշխատելու այլ մոտեցումներ պետք է որդեգրեն: Օրինակ՝ գնան համայնքներ, շրջեն, ՏԻՄ-երի հետ որոշակի տնայցեր կազմակերպեն, բայց ամեն տարի գոնե որոշակի չափով հասնեն հասարակության տարբեր շերտերի: Ես կարծում եմ, որ համայնքներում կարելի է ներդնել նաև երիտասարադական աշխատողի հաստիք (ինչպես օրինակ սոցիալական աշխատողինը), ով համայնքում կզբաղվի հենց երիտասարդների հիմնախնդիրներով ու կկապի համայնքն ասենք նախարարությանը»:*

Կարևոր է այն նկատառումը, որ բացի տեղական ու միջազգային կազմակերպություններից, որոնք գործունեություն են ծավալում որոշակի մարզերում ու համայնքներում, անհրաժեշտ է, որ պետա-

կան մեկ անձևանոց հաստիք ձևավորվի՝ «երիտասարդական աշխատող»-ը, ով հենց համայնքում կլինի երիտասարդների հետ աշխատողը և նրանց խնդիրներն ու կարիքները բարձրաձայնողը: Սրան հասնելու համար էլ կարևոր է, որ համայնքներում երիտասարդների վերաբերյալ կարծրատիպերի վերարտադրմանն ուղղված քայլեր ձեռնարկվեն, այլապես ինչպես երիտասարդները բախվում են նախապաշարմունքային վերաբերմունքի, այնպես էլ երիտասարդական աշխատողը կարող է արժանանալ անլուրջ վերաբերմունքի:

Երիտասարդական ռազմավարության մասին խոսելիս ևս փորձագետներից ոմանք խոսեցին մասնակցային գործընթացների վերաբերյալ.

> *«Յուրաքանչյուր փաստաթուղթ, որը փորձում է երիտասարդական ոլորտում որոշակի փոփոխություններ բերել (այդ թվում նաև ռազմավարությունը) պետք է մշակված լինի երիտասարդների հետ ու երիտասարդների համար՝ ուրվագծվելով նաև, թե ինչ է անելու պետությունը երիտասարդի համար (հաշվի նստելով ու ամփոփելով երիտասարդների պատկերացումները ևս)»:*

Փորձագետներից մյուսը նշում է.

> *«Փաստաթղթերի մշակման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել բոլոր երիտասարդներին, կարևոր է, որ երբեք որևէ բանի չմասնակցած՝ դասից տուն ու հակառակը գնացած, համայնքի տաղավարներում ամբողջ օրը նստած, թաղային որոշակի հեղինակություն ունեցող, չմոտիվացված երիտասարդը իրեն գտնի այդ փաստաթղթում: Սրան հասնելու համար պետությունը պետք է խոսի երիտասարդի հետ»:*

Մեկ այլ խնդիր, որ նշվեց փորձագետների կողմից, մասնակցության եղած հարթակների ոչ մատչելի լինելն է: Այսպես օրինակ՝ ֆոկուս խմբային հարցազրույցների ընթացքում երիտասարդների մի ծանր մասն այդպես էլ չկարողացավ նշել այն հարթակները, որոնց միջոցով հնարավոր է օրենքի նախագծերի վերաբերյալ կարծիքներ արտահայտել, մյուս մասն էլ խոսեց միայն «e-draft»-ի վերաբերյալ՝ նշելով.

> *«Գիտեմ, որ գոյություն ունի e-draft հարթակը, սակայն շատ բարդ է օգտվել այս հարթակից: Օրինակ կայքում գրանցվելը արդեն իսկ մեծ գլխացավանք է, հետո եղել են դեպքեր, որ առաջարկներ եմ արել, բայց պատասխանն օրինակ էդպես էլ չեմ ստացել»:*

Փորձագետներից մեկն էլ նշում է՝

> *«Հասկանում եք e-draft-ը բավարար չէ, ավելին այն նույնիսկ մատչելի չէ, մենք չենք կարող երիտասարդից, ով գիտելիքի, հմտության ու տեղեկատվության պակաս ունի, ակնկալել, որ նա կարող է օգտագործել այս հարթակը: Մյուս կողմից, միթե ավելի հետաքրքիր ու նորարար հարթակներ հնարավոր չէ մշակել ու գործարկել: Այստեղ մեկ այլ խնդիր կա՝ արդյոք նախարարության շարունակական կրթության ու երիտասարդության վարչությունն ունի այդքան ռեսուրս տարբեր հարթակներ գործարկելու համար»:*

Ռեսուրսների մասին խոսելիս փորձագետներից շատերը նշում էին Ազգային երիտասարդական խորհրդի մասին, արդեն իսկ կազմալուծված երիտասարդական միջոցառումների կազմակերպման ՊՈԱԿ-ի, երիտասարդական ուսումնասիրությունների հարթակների

մասին: Շատերն իրատեսականորեն շեշտում էին, որ ԿԳՄՍ նախարարության մեկ վարչությունը չի կարող լուծել վերոնշյալ բոլոր հարցերը: Առաջարկվում էր ստեղծել նախարարությանը, վարչապետին ու ՏԻՄ-երին կից երիտասարդական խորհուրդներ, ինչպես նաև հասկանալ, թե որ կառույցներն են զբաղվելու երիտասարդական ոլորտի խնդիրներով, ավելին՝ ռազմավարության և/կամ տեսլական մշակումից ու հաստատումից հետո, ով է կրելու այն ներդնելու պատասխանատվությունը : Սրան ի հավելումն նշենք, որ երիտասարդության ոլորտի պատասխանատուների վերաբերյալ երիտասարդության շրջանում տեղեկացվածություն հստակ բաց է արձանագրվել: Քանակական տվյալների ու ֆոկուս խմբային քննարկումների վերլուծության արդյունքում երիտասարդների մի ծանր մասը նշել է, որ երբևէ չեն լսել Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ ու շարունակական կրթության վարչության մասին (Պատկեր 6-ն ամփոփում է այս տվյալները՝ հարցվածների 78% -ն չի լսել այս վարչության մասին):

Պատկեր 6.

Լսե՞լ եք Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական վարչության մասին:



Այսպիսով, ազգային կամ պետական մակարդակում երիտասարդների որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում ևս կան բազմաթիվ խոչընդոտներ, մի կողմից

հստակ է, որ այս պահին երիտասարդները պետական գերատեսչությունների ու մասնավորապես ԿԳՄՍ Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ ու շարունակական կրթության վարչության մասին ներկայացուցիչների հետ շփվում են հիմնականում տեղական ու միջազգային կազմակերպությունների միջոցով, բայց մյուս կողմից այն երիտասարդները, որոնք որևէ կազմակերպության ու նախաձեռնության անդամ չեն, զրկվում են ֆորումներին ու հանրային քննարկումներին մասնակցելու հնարավորությունից: Առավել շատ քննարկված մյուս խնդիրը վերոնշյալ վարչության վերաբերյալ տեղեկատվության հստակ բացն ու պակասն է, որից հետո եղած մասնակցային հարթակների ոչ մատչելի ու նորարար լինելը:

Երիտասարդները քանակական ու ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում խոսել են նաև պետություն-երիտասարդ համագործակցության մասին՝ նշելով, թե ինչը կցանկանային փոփոխել: Քանակական հարցումների արդյունքում դուրս են բերվել 5 հիմնական առաջարկներ (տես Պատկեր 7), որոնց մի ծանր մասը նշվել է նաև ֆոկուս խմբային քննարկումների ընթացքում:

Երիտասարդներն իրենք էլ են փաստում, որ տեղեկատվության հասանելիության խնդիրը բավականին արդիական է, բայց, որ ամենակարևորն է նրանք անհրաժեշտություն են տեսնում երիտասարդական մարմինների ձևավորման համար:

Պատկեր 7.

Ի՞նչ կփոխեիք պետություն-երիտասարդներ համագործակցության մեջ:



Մաս 2.2: Քաղաքական մասնակցության իրավիճակային վերլուծություն (խոչընդոտներ ու կարիքներ)

Երիտասարդների քաղաքական մասնակցությունը, մասնավորապես կուսակցությունների, խմբերի ու գաղափարների հարելն ու անդամակցելը, քաղաքական և/կամ պետական պաշտոններ զբաղեցնելը, քաղաքական ակտիվություն ցուցաբերելը և այլն ներկայումս մտահոգիչ են թե՛ տեղական, թե՛ տարածաշրջանային ու միջազգային մակարդակներում: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից կատարված հետազոտություններից շատերը ցույց են տալիս, որ երիտասարդության շրջանում կա ընտրություններին մասնակցելու, քաղաքական կուսակցությունների ու նախաձեռնությունների անդամակցելու, ինչպես նաև քաղաքականությամբ զբաղվելու մոտիվացիայի ու քաղաքական ինստիտուտների նկատմամբ վստահության պակաս:

Ի հակադրություն սրան, երիտասարդները դեռևս շարունակում են ակտիվություն ցուցաբերել ոչ ֆորմալ քաղաքական գործընթացների՝ մասնակցելով բողոքի ակցիաների (2018 թվ. ապրիլ-մայիս ամիսներից հետո ՀՀ-ում երիտասարդությունն ավելի քիչ է մասնակցություն ունենում բողոքի ակցիաների), խնդրագրեր ստորագրելով (սա էլ իր հերթին երկարաժամկետ պարտավորվածություն ու նվիրվածություն չի ենթադրում, բայց արտացոլում է անհատի վերաբերմունքն ու արժեհամակարգն այս կամ այն խնդիր վերաբերյալ[14]) և այլն:

Վերջին տարիներին քաղաքական մասնակցության տեսանկյունից ՀՀ-ում երիտասարդներն ավելի պասիվ են: Փորձագետները նշում են, որ պասիվությանը նպաստել են 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբերի ամիսների ռազմական գործողություններն ու դրան հետևած քաղաքական իրադարձությունները: Մյուս կողմից էլ, չնայած որ 2018 թվականի ապրիլ-մայիս ամիսների իրադարձություններից հետո երիտասարդների՝ քաղաքականության մեջ ներգրավման

14. New and Innovative Forms of Youth Participation in Decision-Making Processes, Council of Europe, 2017, p. 17, https://bit.ly/3u42IJb.

տենդենց նկատվեց, որից հետո ժամանակին քաղաքացիական ակտիվություն ցուցաբերած անձինք անցում կատարեցին քաղաքական դաշտ՝ մաս դառնալով կուսակցությունների, զբաղեցնելով քաղաքական պաշտոններ և այլն: Սակայն որոշակի դեպքերում կուսակցություններում երիտասարդների ներգրավումն ունենում է իմիտացիոն բնույթ, նոր սերունդների ու երիտասարդների վրա բավարար չափով ներդրում չի կատարվում, ինչի արդյունքում էլ նրանք դեկորացիայի ու տոկենիզմի մակարդակից չեն բարձրանում: Օրինակ՝ կուսակցություններից ու դաշինքներից շատերը վերջին մի քանի ընտրությունների ժամանակ երիտասարդներին ներգրավվում էին ընտրական ցուցակներում, բայց թե որքանով էին նրանք իրապես նախաձեռնողներ կամ որոշում կայացնողներ, դժվար է ասել: Այս մասին նշվել է նաև քաղաքացիական հասարակության ու կուսակցական ներկայացուցիչների կողմից:

Փորձագետներից մեկը նշում է.

> *«Ընտրական գործընթացներում հիմա ավելի շատ երիտասարդներ կան, բայց սա չի նշանակում, որ նրանք իրապես մասնակցում են քաղաքական գործընթացներին: Ավելին, սրանից չի կարելի ենթադրել, որ որոշումների կայացումը դարձել է ավելի երիտասարդակենտրոն: Այո՛, ներկայիս խորհրդարանը գուցե ամենաերիտասարդ խորհրդարաններից մեկն է, բայց որոշումները որքանով են բխում երիտասարդների շահերից բարդ է ասել»:*

Մյուս փորձագետը նշում է.

«Տարբեր կուսակցություններ ունեն երիտասարդական թևեր, ամենահինը թերևս Դաշնակցության երիտասարդական թևն է, բայց արդյոք այդ երիտասարդները կուսակցական մակարդակում որոշում կայացնողներ են դժվար է ասել:

Մյուս խնդիրն այն է, որ երիտասարդները ներկայումս առանց քաղաքացիական գիտելիք ու հմտություններ ձեռք բերելու մտնում են քաղաքականություն: Կուսակցություններում էլ նրանց մի մասը դիտարկվում է որպես աջակցող կամ օգնական, ինչի արդյունքում այս երիտասարդները այդպես էլ ո՛չ քաղաքական, և ո՛չ էլ քաղաքացիական բավարար կրթություն չեն ստանում: Հետո նույն երիտասարդները ցանկություն ու հավակնություն են հայտնելու մտնել քաղաքականություն, ու նրանց քաղաքական գործունեությունը բավականաչափ արդյունավետ որակելուց ես գոնե թե խույս կտամ:

Կարծում եմ այս տեսանկյունից բավականին հաջող են քաղաքական դպրոցները, օրինակ՝ «Լուսավոր Հայաստանի» կամ «Հանրապետական» կուսակցությունների կողմից կազմակերպվելիքները»:

Մեկ այլ փորձագետ էլ երիտասարդների՝ քաղաքական մասնակցության խոչընդոտներից խոսելով՝ նշեց.

> *«Կուսակցությունները չունեն հստակ ռազմավարություններ ու քաղաքականություններ երիտասարդներին իրենց կուսակցություններում ներգրավելու համար: Եթե մենք ներկայիս օրենսգրքով ենք նայում, որը սահմանում է, որ ՏԻՄ և ԱԺ մակարդակում ընտրությունների դեպքում թեկնածուները պետք է կուսակցություններ ներկայացնեն, ապա շատ կարևոր է, որ ՀՀ-ում գործող կուսակցությունները ունեն տեսլական՝ երիտասարդներին կուսակցություններում ներգավելու, նրանց կարողությունները զարգացնելու ու քաղաքական մասնակցությունն ապահովելու տեսանկյունից: Թեպետև որոշ կուսակցություններ ունեն քաղաքական դպրոցներ, ես հավատացած եմ, որ դրանք բավարար չեն: Մարզայինից մինչև ԱԺ մակարդակ անհրաժեշտ է ձեռնարկել հստակ քայլեր»:*

Կանանց մասին խոսելիս նույն փորձագետը նշեց.

> *«Կանայք մեր հասարակությունում շատ են թիրախավորվում, և նրանք մշտապես վախ ունեն, որ, նույնիսկ ամենից փոքր պատճառով կարող են թիրախավորվել: Նշեմ, որ մինչև 44 օրյա պատերազմը կանայք (նաև երիտասարդ կանայք) շատ ավելի մոտիվացված էին քաղաքական մասնակցություն ցուցաբերել, քան հիմա»:*

Փորձագետներից շատերը նշում էին, որ երիտասարդների քաղաքական մասնակցությունը արդյունավետ կերպով խթանելու հա-

մար, հենց քաղաքական ուժերն ու կուսակցությունները կարիք ունեն կրթվելու ու վերապատրաստվելու, որպեսզի ոչ միայն կարողանան իրենց հմտությունն ու գիտելիքը ճիշտ ձևաչափով փոխանցել երիտասարդներին, այլ նաև փոխեն իրենց վերաբերմունքը երիտասարդների դերի վերաբերյալ:

Իրենց՝ երիտասարդների հետ քննարկումների ժամանակ, շատերը խույս են տալիս քաղաքականության մասին խոսել՝ նշելով շատ տարածված խոսույթներ. «քաղաքականությունը անբարոյականություն է», «քաղաքականությունը կեղտոտություն է», «ես շատ երիտասարդ եմ ձեռքերս կեղտոտելու համար», «ինձ համար ավելի լավ է համայնքում որոշակի ծրագրեր անել, քան քաղաքականությամբ զբաղվել» և այլն:

Փորձագետներից մեկը, ով համակարգել է ԱԺ-ի հետ փորձնակների ծրագիրը նշում է.

> *«Բավականին բարդ էր խմբակցություններ փորձնակներ ուղարկելը: Օրինակ՝ փորձնակները չէին ցանկանում գնալ այս կամ այն խմբակցություն: Դրա փոխարեն, երիտասարդների փորձնակներից շատերն ուզում էին աշխատել ոլորտային հանձնաժողովների համար: Նշեմ նաև, որ այս ծրագրի արդյունքում փորձնակներից ոմանք ԱԺ-ում աշխատանքի անցնելու ցանկություն ու հնարավորություն ունեցան»:*

Մյուս կարևոր խնդիրը երիտասարդների շրջանում քաղաքականության (politics) ու հանրային քաղաքականության (public policy) տերմինների թյուրընկալումն է: Երբեմն երիտասարդները քաղաքականությունների մշակման մասին լսելիս, քաղաքական գործունեությունն ու դրանց վրա ազդեցությունն են պատկերացնում, այնինչ խոսքը հանրային քաղաքականությունների մասին է: Թյուրըմբռնումների արդյունքում էլ հանրային քննարկումների, դասընթացների, ֆորումների և այլ միջոցառումների ընթացքում երիտասարդների մասնակցության նվազում է նկատվում:

Ամփոփելով նշենք՝ այն հարցին, թե երիտասարդներն այսօր որոշում կայացնողներ համարվում են փորձագետներից հիմնականում ստացվել են նմանատիպ բացասական պատասխաններ (նշենք, որ փորձագիտական հարցումների փուլում ներգրավված են եղել թե պետական կառույցների, թե հասարակական/քաղաքական դաշտի ներկայացուցիչներ): Միայն փորձագետներից երկուսն են նշել, որ երիտասարդները որոշումների կայացմանն ու քաղաքականությունների մշակմանը մասնակցում են, սակայն այլ հարց է, թե ինչ ազդեցություն են նրանք ունենում:

Հարցազրույցներից մեկի ժամանակ փորձագետներից մեկը ընդգծեց.

> *«Երտասարդները մասնակից են որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակմանը, բայց որոշումներ կայացնողներ չեն: Գուցե ազդեցության գործակալներ են, բայց գործընթացներից շատերը չեն պսակվում հաջողությամբ քանի որ որոշում կայացնողները պատրաստակամ չեն կատարել առաջարկվող փոփոխությունները»:*

Փորձագետներից մեկը նշում է.

> *«Պետք է անկեղծ լինել, երիտասարդներն այսօր փորձում են որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման վրա ազդեցություն ունենալ, բայց թե դա ինչ հետևանք է ունենում դժվար է ասել, կամ, գուցե այլ հարց է»:*

Փորձագետներից նշում է՝

> *«Երիտասարդները կարողանում են քաղաքական մակարդակում որոշումների կայացմանը մասնակցել հիմնականում, եթե պաշտոններ են զբաղեցնում: Հետաքրքրական է, նույնիսկ այս տե-սանկյունից, չեմ նկատել, որ երիտասարդների առաջարկած բարեփոխումները կամ օրենսդրական փոփոխությունները փոփոխութ-յունները լուսաբանվեն հենց երիտասարդների քաղաքական մասնակցության հաջողության տեսանկյունից (ավելի խնդրային է, երբ կանայք են այդ փոփոխություններն առաջարկում կամ բերում)»:*

Ֆոկուս խմբային քննարկումների արդյունքում, երիտասարդներից շատերը նշում էին, որ ՏԻՄ մակարդակում քաղաքական մասնակցության մի ձև է ավագանու անդամ դառնալը, այն հարցին, թե նրանք կցանկանային կամ դիտարկում են իրենց, որպես ավագանու անդամ, հիմնականում ստացվում էին բացասական պատասխաններ:

> *«Չեմ կարծում, որ ես ինձ տեսնում եմ որպես ավագանու անդամ, բայց նաև չգիտեմ, թե ինչքանով իմ ձայնը լսելի կլինի կամ ընդհանրապես կկարողանամ որոշակի փոփոխություններ կատարել: Հետո նաև չեմ ուզում ասոցացվել որևէ կուսակցության հետ, իսկ հիմա ավագանու անդամ դառնալու համար անհրաժեշտ է լինել կուսակցական ցուցակներում»:*

Երիտասարդները իրենք էլ մոտիվացված չեն քաղաքական մասնակցություն կամ ակտիվություն ցուցաբերել տեղական մակարդակում ենթադրելով, որ այն բավականին պարտավորեցնող է, միևնույն ժամանակ կա տարակուսանք, թե որքանով նրանք կարող են ազդե-

ցություն ունենալ համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում:

Իսկ թե Հարթի աստիճանակարգի որ մակարդակում են նրանք տեսնում երիտասարդներին՝ հիմնականում նշվել են առաջին չորս մակարդակները՝ մանիպուլյացիա, դեկորացիա, իմիտացիա/տոկենիզմ և տեղեկացումը: Դիտարկելով նաև այն պատասխանները, որոնք հնչել են ֆոկուս խմբային քննարկումների ու քանակական տվյալների վերլուծության արդյունքում, երիտասարդական մասակցություն սահմանափակվում է 3-րդ՝ իմիտացիայի/տոկենիզմի մակարդակով:

Փորձագետներից մեկը նշում է՝

> *«Չնայած որ ընտրական գործընթացներում մասնակցությունը ավելի ազատականացվել է, բայց ՏԻՄ մակարդակում կան օրինակներ, որ ընտրություններում առաջադրված երիտասարդներն ու կանայք բավականին շատ թիրախավորվել ու ճնշումների են ենթարկվել»:*

Երիտասարդների քաղաքական մասնակցությունը խթանելու համար անհրաժեշտ է, որ կուսակցություններն ու քաղաքական կուսակցությունները փոխեն իրենց վերաբերմունքն ու մշակեն հստակ քայլեր՝ այս խմբին իրենց գործունեության մեջ իրապես ներառելու համար:

Փորձագետները նշում էին՝

> *«Եթե ցանկանում ենք հասնել երիտասարդների իրական ակտիվացման, կուսակցությունների ներսում պետք է սկսել ցուցաբերել քաղաքական կամք ու գիտակցում՝ երիտասարդների դերի կարևորության վերաբերյալ: Անհրաժեշտ է երիտասարդներին տարբեր կերպ ընգրկել պետական կառույցներում, օրինակ՝ հենց երիտասարդական խորհուրդների մակարդակում»:*

> *«Կրթությունը, ինչպես նաև ոչ ֆորմալ կրթական գործընթացները, պետք է նպաստեն ոչ միայն քաղաքացիական մասնակցության ակտիվության բարձրացմանը, այլ նաև քաղաքականի: Պետք է հասկանալ, որ երիտասարդը միայն ակտիվիստ չէ»:*

Փորձագետների կողմից շատ է նշվել նաև կուսակցությունների՝ երիտասարդների հետ աշխատանքում տեսլականի ու ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը.

> *«Կուսակցությունները պետք է մշակեն հստակ ռազմավարություններ, որոնց գործարկումը կխթանի երիտասարդների քաղաքական մասնակցությունը, բայց դրան զուգահեռ անհրաժեշտ է ապահովել նրանց կրթական զարգացումը: Մեկն առանց մյուսը որակյալ լինել չի կարող»:*

Հետևելով միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերին, հարկ է նշել, որ բացի այն, որ ՀՀ-ն ստանձնելով մի շարք պարտավորություններ՝ խթանելու երիտասարդության մասնակցությունը որո-

շումների կայացման ու քաղաքականությունների մշակման տարբեր մակարդակներում, պետք է հրատապ քայլերի ձեռնարկի՝ երիտասարդության ոլորտում ռազմավարական փաստաթղթերի ստեղծման ու դրանց կիրարկման համար: Իրենց հերթին այս գործողություններից յուրաքանչյուրը պետք է միտված լինի երիտասարդների՝ մասնակցության ապահովելու համար կարիքների բացահայտմանն ու խոչընդոտների վերացմանը: Ի հավելումն մասնակցության ու մասնավորապես երիտասարդական մասնակցության վերաբերյալ իրավական փաստաթղթերը, գրականությունը, երիտասարդների ու փորձագիտական համայնքի կարծիքի ուսումնասիրությունը առանձնացնում են կարծիք արտահայտելու ազատությունը, գործողություններ նախաձեռնելու ու ազդեցություն ունենալու հնարավորությունը որպես մասնակցայնության հիմնական տարրեր: Սակայն այս տարրերի արդունավետությունը կասկածի տակ է դրվում դրանք փորձարկելու հարթակների պակասի կամ բացակայության պատճառով: Որն էլ իր հերթին հանգեցնում է ոչ իրական, թափանցիկ, համագործակցային, կարիքահենք քաղաքականությունների մշակմանը, որոշումների կայացմանն ու վերջիններիս կիրարկմանը:

Գրականության ցանկ՝

1. Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա, ՄԱԿ, 1989, https://bit.ly/3XxslQ9:
2. Երիտասարդահեն Զարգացման Ուղենիշներ, ԿԱԶԱ շվեյցարական մարդասիրական հիմնադրամ, Երևան, 2017, https://bit.ly/2OLACf9:
3. «ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության 2021-2025թթ. ռազմավարության» նախագիծ, ԿԳՄՍՆ, 2021, https://bit.ly/3i7IjAq:
4. Մարդկային զարգացման ազգային զեկույց, ՄԱԶԾ, 2018/2019, https://bit.ly/3U690CU:
5. Մարդահամար 2011, https://bit.ly/3AKyPBC:
6. Վահրամ Դումանյանի շնորհավորական ուղերձը Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ, 12/08/2022, https://bit.ly/3GMbgMj:
7. Definition of Participation, (Part of 2004 Report "Designing Social Capital Sensitive Participation Methodologies"), 2004, https://bit.ly/3gyTbqI.
8. New and Innovative Forms of Youth Participation in Decision-Making Processes, Council of Europe, 2017, https://bit.ly/3u42IJb.
9. Political Participation and Civic Engagement: Towards a New Typology, Joakim Ekman, Erik Amnå "Human Affairs", 2012, DOI: 10.2478/s13374-012-0024-1.
10. Revised European Charter on the Participation of Young People, in Local and Regional Life, Council of Europe, 2015, preamble, https://bit.ly/3U6jWQH.
11. Youth - Overview, Eurostat, European Union, https://bit.ly/3Va3pgg.
12. Youth, UN, https://bit.ly/3EWmjRL.

Հավելված 1.

Հարթի մասնակցության աստիճանակարգ

8. ՀԱՄԱԲՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդինն է: երիտասարդները համագործակցում են մեծահասակների հետ՝ օգտագործելով նրանց գիտելիքներին ու փորձառությունը հօգուտ նախաձեռնության:	Բուհի ուսանողները որոշում են ստեղծել ուսանողական գիտական ընկերություն, որը պետք է մշակի նորարարական հետաքրքիր գաղափարներ, որոնք կարող են կիրառվել բիզնեսում: Ընկերությունը կազմում է իր կառավարման խորհուրդը, որտեղ որոշվում է նաև ներգրավել համապատասխան ֆակուլտետի ճանաչված դասախոսների և մի քանի իստիտուտի գիտնականների, որոնք կարող են նպաստել այդ ընկերության զարգացմանը:
7. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ	Նախաձեռնությունն ամբողջությամբ երիտասարդներինն է: Երիտասարդներն իրենք են մշակում նախաձեռնությունը, հայթայթում միջոցները և իրականացնում այն:	Երիտասարդական խումբը որոշում է աղետից տուժած այն ընտանիքների համար, որոնք դեռ ապրում են տնակներում,. լուծել բնակարանային խնդիրներ: Նրանք կազմում են ֆոնդհայթայթման «քրաուդֆանդինգային» ծրագիր, հավաքում են միջոցներ և իրականացնում են բնակարանների ապահովման ծրագիրը բացարձակ ինքնուրույն և ըստ իրենց իսկ որոշած ծրագրի:
6. ՀԱՄԱՏԵՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներն ու մեծահասակները նախաձեռնության իրականացման ընԷացքում հավասարազոր ձայնի իրավունք ունեն:	Համակառավարման մեխանիզմ. կառավարությունը ստեղծում է իրեն առընթեր երիտասարդական քաղաքականության խորհուրդ, որտեղ 50/50 սկզբունքով ներգրավվում են երիտասարդական կազմակերպությունների անդամներ, փորձագետներ և համապատասխան նախարարությունների ներկայացուցիչներ, որոնք համատեղ որոշումներ են ընդունում երիտասարդական քաղաքականության զարգացման ուղղությունների վերաբերյալ:
5. ՏԵՂԵԿԱՑՈՒՄ ԵՎ ԽՈՐԴՐԴԱԿՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացված են և իրենց կարծիքը հաշվի է առնվում: Այն կարող է ընդունվել կամ չընդունվել:	Քաղաքի բարեգործական ծրագրերի մշակման ժամանակ քաղաքային իշխանություններն առցանց գործիքների միջոցով հնարավորություն են ստեղծում երիտասարդական խմբերին մասնակցել, բյուջեի բաշխմանը՝ քվեարկելով այս կամ այն բարեգործական ծրագրի համար: Նրանց կարծիքները հաշվի են առնվում վեր
4. ՏԵՂԵԿԱՑՈՒՄ	Նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները տեղեկացված են նախաձեռնության նպատակի և բոլոր գործընթացների մասին, իսկ մասնակցում են որպես կատարողներ:	Կազմակերպություններին իրականացնում են ծրագրեր երիտասարդների համար, Երիտասարդ անդամները մասնակցում են կազմակերպության թիրախ խմբերի համար տրամադրվող բազմաթիվ ծառայությունների մատուցմանը, սակայն որևէ կերպ չեն մասնակցում կազմակերպության կառավարմանը, ծրագրերի մշակմանը և նյութական ռեսուրսների բաշխմանը:
3. ԻՄԻՏԱՑԻԱ	նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներին հրավիրում են «մասնակցելու» մեծահասակների աշխատանքին: Այդ խմերը կայացնում են մեխահասակների կողմից թելադրված կամ ոչ մեկին չհետաքրքրող որևէ ազդեցություն չգործող որոշումներ:	Քաղաքական կամ հասարակական ոլորտում ռազմավարական ծրագրերի մշակման ընթացքում երիտասարդների որոշ խումբի շրջանում անց են կացվում հանրային լսումներ, սակայն դրանց կողմից առաջարկված գաղափարների ներառման իրական հնարավորություններ և մեխանիզմներ չկան:
2. ԴԵԿՈՐԱՑԻԱ	նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդներին օգտագործում են որպես զարդարանք՝ մածահասակների գործունեությանը հավելյալ կշիռ և դրական տպավորություն հաղորդելու համար:	Նախագահական կամ այլ ընտրությունների Ժամանակ հեռուստատեսությամբ հաճախ ցույց են տալիս թեկնածուների այցեր դպրոցներ և մանկապարտեզներ: Պաստառների և թռուցիկների վրա տեղադրվում է թեկնածուի լուսանկարը երեխաներին գրկած կամ Երիտասարդների հետ ննարկումներ վարելիս:
1. ՄԱՆԻՊՈՒԼԱՑԻԱ	նախաձեռնությունն ամբողջությամբ մեծահասակներինն է: Երիտասարդները պարզապես ներկա են գտնվում և հետևում իրահանգների: Երիտասարդները չգիտեն՝ ինչու են մասնակցում այդ միջոցառումներին ու գալիս են՝ այլ դրդապատճառներից ելնելով:	Միջոցառման կազմակերպօիչները բաժանվում են երիտասարդներին տարբեր պատկերներով և տեքստերով շապիկներ և տանում որևէ թեմայի հավաքի կամ ֆլեշմոբի մասնակցելու: Որպես կանոն նրանց չի բացատրվում տվյալ միջոցառման Էությունը, նպատակը, իրենց դերն ու մասնակցության իմաստը:

Հավելված 2.

Քաղաքական ու քաղաքացիական մասնակցություն[15]

Քաղաքացիական մասնակցություն (թաքնված քաղաքական մասնակցություն)		Քաղաքական մասնակցություն (բացահայտ քաղաքական մասնակցություն)		
Ներգրավվածություն (ուշադրություն)	Քաղաքացիական ներգրավվածություն (գործողություն)	Պաշտոնական/ֆորմալ քաղաքական մասնակցություն	Ակտիվիզմ (արտխորհրդարանական մասնակցություն)	
			Օրինական	Անօրինական
Անհատական աստիճան				
Անձնական հետաքրքրություն քաղաքականության և հասարակական խնդիրների նկատմամբ Ակտիվություն քաղաքական հարցերի նկատմամբ	Գործունեություն, որը հիմնված է քաղաքականության և հասարակական խնդիրների նկատմամբ անձնական հետաքրքրության և ուշադրության վրա	Ընտրություններին մասնակցություն և կոնտակտային գործունեություն (տարբեր մեթոդներով կապ պահել քաղաքական գործիչների հետ)	Արտախորհրդարանական մասնակցության ձևեր. մեկ անգամ ձայնը լսելի դարձնել կամ անհատական միջոցներով փոփոխություն մտցնել (օր.՝ խնդրագրերի ստորագրում, քաղաքական սպառում[16])	Անհատական հիմունքներով քաղաքական դրդապատճառներով ապօրինի գործողություններ ()
Հավաքական աստիճան				
Որոշակի քաղաքական նկարագիր կամ օրակարգ ունեցող խմբին կամ կոլեկտիվին պատկանելու զգացում Կենսակերպին առնչվող քաղաքականություն (օրինակ՝ ինքնություն, հագուստ, երաժշտություն, սնունդ, արժեքներ)	Տեղական համայնքում պայմանները բարելավելու նպատակով կամավոր աշխատանք, բարեգործական նպատակներով կամ ուրիշներին օգնության տրամադրում (սեփական ընտանիքից և ընկերների շրջապատից դուրս)	Կազմակերպված քաղաքական մասնակցություն. անդամակցություն ավանդական քաղաքական կուսակցություններին, արհմիություններին և այլ կազմակերպություններին	Ցանցային քաղաքական մասնակցության թույլ կազմակերպված ձևեր. սոցիալական նոր շարժումներ, ցույցեր, գործադուլներ և բողոքի ցույցեր	Ապօրինի ու բռնի գործողություններ և բողոքի ցույցեր. ցույցեր, անկարգություններ, շենքերի պաշարումներ, գույքի վնասում, առերեսումներ ոստիկանության կամ քաղաքական հակառակորդների հետ

15. Political Participation and Civic Engagement: Towards a New Typology, Joakim Ekman, Erik Amnå "Human Affairs", 2012, p. 292, DOI: 10.2478/s13374-012-0024-1.

16. Քաղաքական սպառում - որոշակի քաղաքական դրդապատճառներից ելնելով, հրաժարվել կամ բոյկոտել որոշակի ապրանքներ ու ծառայություններ:

Հավելված 3.

Ֆոկուս խմբային քննարկումների հարցաշար

- **Մաս 1 - Երիտասարդների հիմնախնդիրները ՀՀ-ում**

13. Նախ խնդրում եմ ներկայացեք՝ նշելով Ձեր մարզն ու համայնքը, ինչո՞վ եք եք զբաղվում (ուսանող եք, թե աշխատում եք) և ի՞նչ գործունեություն եք ծավալումը:
14. Բնակվու՞մ եք Ձեր համայնքում, եթե՝ ոչ, ինչու՞:
15. Մի պահ մտածեք և փորձեք սահմանել, թե ո՞վ է երիտասարդը: Խնդրում եմ նշեք՝ թե ինչ եք հասկանում «երիտասարդների մասնակցություն» ասելով: Մասնակցության ինչպիսի՞ տեսակներ կարող եք մտաբերել:
16. Որո՞նք են այն հիմնական խնդիրները ու խոչընդոտները, որոնց երիտասարդներն այսօր բախվում են ինքնահիրացվելիս՝ որպես անհատ և քաղաքացի: Ո՞ր մակարդակում եմ դրանք ավելի շատ:
17. Ինչպե՞ս կսահմանեիք քաղաքական ու քաղաքացիական մասնակցությունը: Ո՞րն է ավելի շատ տարածված երիտասարդների շրջանում: Դուք քաղաքական ու քաղաքացիական ի՞նչ ակտիվություն եք ցուցաբերում:

- **Մաս 2 - Համայնքային մասնակցություն**

1. Ինչպե՞ս կսահմանեք համայնքային մասնակցություն, որո՞նք են դրա արտահայտման ձևերը: Ձեր նշածներից որո՞նք եք փորձարկել:
2. Ի՞նչ եք կարծում կրթությունը ազդեցություն ունենում է մասնակցության և դրա մակարդակների վրա: Երիտասարդների դեպքում ինչպե՞ս է դա արտահայտվում:
3. Ձեր համայնքում երիտասարդները ինչպիսի՞ մասնակցություն են ունենում համայնքային կյանքին: Ո՞րն է մասնակցության

ամենատարածված ձևը: Ի՞նչ քայլեր կամ միջոցներ են ձեռնարկում նրանք որոշումների կայացմանը կամ համայնքային կայնքային մասնակցելու համար: Կա՞ն խոչընդոտներ, որոնք խանգարում են երիտասարդներին սկսել որոշակի նախաձեռնություններ:

4. Ձեր համայնքում հասարակական կազմակերպություններ գործու՞մ են: Կա՞ն այնպիսի կազմակերպություններ, որոնք ծավալում են գործունեություն Ձեր համայնքում: Ինչպե՞ս են նրանք համագործակցում համայնքապետարանի և համայնքի բնակիչների հետ:
5. Ձեր համայնքում ՏԻՄ-ը համագործակցում է երիտասարդների հետ: Ի՞նչ գործողություններ են իրականացվում: Ինչպիսի՞ն է երիտասարդների վերաբերմունքը ՏԻՄ նկատմամբ:
6. Ի՞նչ խնդիրներ եք տեսնում համայնք-երիտասարդ համագործակցության ու հաբերությունների մեջ: Ի՞նչը կփոխեիք:

- **Մաս 3 - Պետական մակարդակ**

1. Ինչպե՞ս կսահմանեիք մասնակցությունը պետական մակարդակում: ՀՀ-ում երիտասարդները ինչպիսի՞ մասնակցություն են ունենում որոշումների կայացմանը:
2. Որո՞նք են այն կառույցները, որոնք զբաղվում են երիտասարդների հիմնախնդիրներով: Ի՞նչ քայլեր ու գործունեություն են նրանք ծավալում:
3. Մասնակցություն ունեցե՞լ եք որևէ միջոցառման, որը կազմակերպվել է այս կառույցների կողմից: Ի՞նչ քննարկում կամ միջոցառում է եղել:
   - Տեղյակ եք ԿԳՍՄ նախարարության Երիտասարդական քաղաքկաանության, լրացուցիչ ու շարունակական կրթության վարչությունից: Ի՞նչ գործունեություն է այն ծավալում:

4. Հանրային քննարկումների կամ երիտասարդական ֆորումների մասնակցե՞լ եք: Ի՞նչ առաջարկներով եք հանդես եկել, ինչպիսի զարգացումներ են տեղի ունեցել: Ձեր ձայնը լսելի եղե՞լ է: Ո՞ր կազմակերպությունների կողմից են դրանք կազմակերպվել:
5. Վերոնշյալ երկու հարցերի ու քննարկումների տեսակների շուրջ առաջարկներ ունե՞ք: Ինչպե՞ս եք դրանք գնահատում: Ի՞նչը կփոխեիք:
6. ՀՀ-ում երիտասարդներին վերաբերվող ի՞նչ փաստաթղթերի եք ծանոթ: Ինչպե՞ս եք գնահատում դրանց արդյունավետությունը:
7. Երտասարդ-պետություն համագործակցության տեսանկյունից, որը՞ կլիներ Ձեզ համար ամենաարդյունավետ ու ամենանախ-ընտրելի տեսակը, ինչու՞:

Հավելված 4.

Փորձագիտական հարցազրույցների հարցաթերթ

- Ներկայացեք, մի փոքր խոսեք Ձեր փորձառությունից:
- Ինչքանո՞վ եք ներգրավված երիտասարդների հետ աշխատանքում, ի՞նչ գործունեություն եք ծավալում երիտասարդության ոլորտում:
- Ինչպե՞ս կգնահատեիք երիտասարդների ակտիվությունը հասարակական-քաղաքական ոլորտներում: Ի՞նչ խանգարող հանգամանքներ եք տեսնում:
    - Քաղաքական
    - Հասարակական
- Ընդհանուր առմամբ ՀՀ-ում երիտասարդները համարվու՞մ են որոշում կայացնողներ և/կամ ունենում են ազդեցություն որոշումների կայացման վրա:
- Հաշվի առնելով բոլոր խանգարող հանգամանքները, ի՞նչ քայլեր կարելի է ձեռնարկել երիտասարդների շրջանում հասարակական-քաղաքական ակտիվությունը խթանելու համար:
    - Պետության կողմից քայլեր:
    - ՏԻՄ
    - Քաղաքացիական հասարակության կողմից:
- Ի՞նչ եք կարծում կրթական մակարդակն ազդեցություն ունենում է երիտասարդների մասնակցության և/կամ ակտիվության, այդ թվում նաև որոշումների կայացման վրա: Ինչպիսի՞ ազդեցություն այն կարող է ունենալ: Ներկայիս կրթական համակարգը խթանու՞մ է երիտասարդների ակտիվությունը:

- **Համայնքային մակարդակ**

- Որքա՞ն արդյունավետ եք համարում երիտասարդների մասնակցությունը համայնքային կյանքում և համայնքային մակարդակում:
    - Ինչպիսի՞ գործողություններ են նրանք հիմնականում իրականացնում համայնքային մակարդակում:
    - Հիմնականում ինչպիսի՞ խնդիրներով են հետաքրքրվում երիտասարդները տեղական/համայնքային մակարդակում:
- Ի՞նչ հաջող օրինակներ կհիշեք, երբ երիտասարդները համայնքային մակարդակում հասել են հաջողության կամ փոփոխության:
- ՏԻՄ-եր հետաքրքրվա՞ծ են երիտասարդների հետ համագործակցության մեջ: Ի՞նչ հիմնական ձևերով կամ մեթոդներով են նրանք ներգրավվում երիտասարդներին կամ խթանում նրանց ակիտվություն տեղական մակարդակում:
- Արդյունավե՞տ են արդյոք Ձեր նշած մասնակցության ձևերը, ինչպես կգնահատեք գործընթացը: Ի՞նչ խնդիրներ եք տեսնում: Ինչպե՞ս պետք է լուծվեն այդ խնդիրները տեղական մակարդակում:

- **Պետական մակարդակ**

- Տեղյակ եք երիտասարդական ոլորտում և երիտասարդական քաղաքականության զարգացումներից, ըստ Ձեզ որքա՞ն անհրաժեշտ ու հրատապ է ունենալ երիտասարդական քաղաքականություն ու ռազմավարություն: Ի՞նչ կփոխի այն երիտասարդների կյանքում:
- Ի՞նչ եղանակներով են երիտասարդները մասնակցություն ունենում պետական մակարդակում խնդիրների բարձրացմանն ու որոշումների կայացմանը: Նրանց ձայնն իրապես լսելի՞ է:

- Մասնակցել եք պետական կառույցների կողմից կազմակերպված հանրային քննարկումների, փակ հանդիպումների, որտեղ քննարկվել են երիտասարդների հիմնախնդիրները: Ի՞նչ զարգացումներ են ունեցել այդ հանդիպումները: Երիտասարդները ներգրավված եղե՞լ են այս հանդիպումներին:
    - Ի՞նչ եք կարծում այս հանդիպումները արդյունավետ էին երիտասարդների և պետության համար:
    - Հետադարձ կապ եղել է հանդիպումներից հետո: Արդյունքները հաղորդակցվել են մասնակից կողմերի հետ:
- Պետությունը, պետական կառույցները ի՞նչ եղանակներով են խթանում երիտասարդների ակտիվ մասնակցությունը որոշումների կայացման գործընթացներում: Եթե գնահատեք 1-10 բալանոց (շատ արդյունավետ, ընդհանրապես արդյունավետ չէ) համակարգով, ապա որտեղ է ՀՀ-ն այս պահին:
- Ինչ կփոխեիք պետական ռազմավարության, օրակարգի մեջ՝ խթանելու համար երիտասարդների մասնակցությունը որոշումների կայացմանը: Նշեք որոշակի գործողություններ, որոնք կարող են արդյունավետորեն *աջակցել այս գործընթացին:*

Հավելված 5.

Քանակական հետազոտության հարցաթերթ

- **Մաս 1 - Ժողովրդագրական հարցեր**

(այս հարցերը մշակված են ստանալու ընդհանուր ժողովրդագրական պատկեր հարցման մասնակիցների շրջանում)

1. **Սեռ՝**
   - Արական
   - Իգական
   - Այլ
2. **Տարիքային խումբ՝**
   - 15-19
   - 20-24
   - 25-29
3. **Մարզ՝**
   - Արագածոտն
   - Արարատ
   - Արմավիր
   - Գեղարքունիք
   - Լոռի
   - Կոտայք
   - Շիրակ
   - Սյունիք
   - Վայոց ձոր
   - Տավուշ
   - Երևան (քաղաք)

4. **Համայնք՝**

_____

5. **Ներկայումս բնակվու՞մ եք Ձեր համայնքում («ոչ պատասխանի դեպքում անցնել հաջորդ հարցին», «այո» պատասխանի դեպքում անցնել 7-րդ հարցին)՝**
   - Այո
   - Ոչ

6. **Որտե՞ղ եք ներկայումս բնակվում (մարզ, համայնք)՝**

_____

7. **Կրթություն՝**
   - 1-ից 9-րդ դասարան
   - 10-ից 12-րդ դասարան
   - Միջին մասնագիտական և արհեստագործական
   - Բարձրագույն
   - Չունեմ կրթություն

8. **Մասնագիտական ոլորտ՝**

_____

9. **Զբաղվածություն՝**
   - Զբաղված
   - Ինքնազբաղված
   - Տնային տնտեսություն վարող
   - Աշխատանք փնտրող (գործազուրկ)
   - Աշխատանք փնտրող (աշխատանք փոփոխության ցանկություն)
   - Աշակերտ/ուսանող

10. **Նշվածներից ո՞ր մակարդակում եք ամենից շատ ցուցաբերել որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործընթացներում մասնակցություն և/կամ ունեցել Ձեր ներդումը (մեկից ավել պատասխան)՝**
    - Համայնքային
    - Մարզային
    - Համապետական
    - Այլ

11. **Ի՞նչ եք հասկանում «երիտասարդների մասնակցություն որոշումների կայացման ու քաղաքականության մշակման գործընթացներում» կապակցությունն ընթերցելիս:**

- **Մաս 2**

(այս բաժնի նպատակն է պարզել, թե երիտասարդներն ինչպիսի՞ մասնակցություն են ունենում համայնքային կյանքում ու համայնքային մակարդակում որոշումների կայացման գործընթացներում)

12. **Համայնքային մակարդակում՝ որոշումների կայացման ու քաղաքականությունների մշակման գործում, երիտասարդների մասնակցության համար կրթությունն ունի կարևոր նշանակություն:**
    - Միանշանակ համաձայն եմ
    - Համաձայն եմ
    - Համաձայն չեմ
    - Ընդհանրապես համաձայն չեմ
    - Չգիտեմ/չեմ կարող ասել

13. **Ձեր ստացած կրթությունը օգնում է Ձեզ ակտիվ մասնակցություն ունենալ Ձեր համայնքում ծրագրերի ներդրման ու որոշումների կայացման մեջ:**
    - Միանշանակ համաձայն եմ
    - Համաձայն եմ
    - Համաձայն չեմ
    - Ընդհանրապես համաձայն չեմ
    - Չգիտեմ/չեմ կարող ասել

14. **Ինչպե՞ս եք գնահատում Ձեր մասնակցություն Ձեր համայնքի խնդիրների վերհանման ու լուծման գործում:**
    - Ընդհանրապես չեմ մասնակցում
    - Պասիվ եմ, բայց որոշակի մասնակցություն ունենում եմ
    - Պարբերաբար ունենում եմ իմ մասնակցություն
    - Շատ ակտիվ գործունեություն եմ ծավալում
    - Չգիտեմ/չեմ կարող ասել

15. **Անհատները կամ խմբերն ունենու՞մ են ազդեցություն որոշումների կայացման ու քաղաքականությունների գործընթացում Ձեր մասնակցության վրա («ոչ» պատասխանի դեպքում, անցեք 17-րդ հարցին):**
    - Այո
    - Ոչ

16. **Նշեք, թե հետևյալ անհատներից ու խմբերից որոնք են ունենում այդ ազդեցությունը (ընտրեք առավելագույն 3 պատասխան)**
    - Համայնքապետ
    - Համայնքապետարանի աշխատակից/ներ
    - Դպրոցի/մանկապարտեզի աշխատակից/ներ
    - Դպրոցի/մանկապարտեզի սովորող/ներ

- Համայնքում եղած կազմակերպություններ և/կամ նախաձեռնություններ
- Ընտանիքի անդամ/ներ
- Ընկեր/ներ
- Այլ

17. Մասնակցե՞լ եք Համայնքի «5-ամյա զարգացման ծրագրի» և/կամ «տարեկան զարգացման պլանի» քննարկումներին («ոչ» և «քննարկումներ չեն լինում» պատասխանների դեպքում անցնել 20-րդ հարցին):

- Այո, մասնակցել եմ:
- Այո, մասնակցել եմ և հանդես եմ եկել առաջարկներով:
- Ոչ, չեմ մասնակցել:
- Մեր համայնքում նմանատիպ քննարկումներ չեն իրականացվել:

18. Ինչպե՞ս եք իմացել այդ քննարկումների մասին (ընտրել առավելագույնը 3 պատասխան):

- Սոցիալական մեդիա
- Էլ. հասցե
- Տպագիր մամուլ
- Համայնքում փակցված հայտարարություններ
- Համայնքի բնակիչներ
- Համայնքապետարանի աշխատակից
- Այլ

19. Մասնակցության դեպքում, ի՞նչ առաջարկություններ եք ներկայացրել, դրա՞նք ընդունվել են:

_____

20. Նշեք, թե որքա՞ն հաճախ է Ձեր համայնքապետարանը կիրառում ներքոնշյալները՝ երիտասարդներին համայնքային կյանքում ներգրավելու համար.

	Երբեք	Երբեմն	Հաճախ	Միշտ	Չգիտեմ/չեմ կարող ասել
Հրավիրում է նրանց վարելու միջոցառումներ/քննարկումներ:					
Ներկայացնում է իր կատարած ու ծավալած գործունեությունը:					
Խոսում է երիտասարդների դերի կարևորության մասին:					
Հրավիրում է երիտասարդներին մասնակցելու համայնքային միջոցառումների:					
Հրավիրում է երիտասարդներին հանրային քննարկումների:					
Հատուկ երիտասարդների համար կազմակերպում է քննարկումներ, լսում նրանց կարծիքը այս կամ այն հարցի վերաբերյալ, հատուկ ուշադրություն է դարձնում նրանց դրանց՝ որոշումների կայացման գործընթացում:					
Այս կամ այն խնդրի լուծման համար օգտագործում է երիտասարդների կողմից հնչեցված առաջարկներ:					
Ներգրավում է երիտասարդներին որոշումների կայացմանը, լսում է նրանց կարծիքը, գնահատում կարիքները, ու դրա արդյունքում նրանց հետ համատեղ կազմում և իրագործում գործողությունների պլան:					

21. Նշեք, թե որքա՞ն հաճախ են Ձեր համայնքի երիտասարդներն իրականացնում հետևյալ գործողությունները.

	Երբեք	Երբեմն	Հաճախ	Միշտ	Չգիտեմ/չեմ կարող ասել
Կատարում են կամավորական աշխատանքներ և կիսվում են իրենց փորձով համայնքի հետ:					
Անդամակցում են համայնքում գործող կազմակերպությունների և/կամ նախաձեռնությունների:					
Մասնակցում են համայնքում գործող կազմակերպությունների/նախաձեռնությունների կողմից ձեռնարկված միջոցառումների:					
Կազմակերպում են միջոցառումներ համայնքում գործող կազմակերպությունների/նախաձեռնությունների հետ:					
Մասնակցում են համայնքապետարանի կողմից իրականացված միջոցառումների:					
Անդամակցում են համայնքապետին կից երիտասարդական խորհրդին:					
Մասնակցում են համայնքում կազմակերպված հանրային քննարկումներին, ավագանու նիստերին, ունենում են ելույթներ և հնչեցնում կարծիքներ:					
Զբաղվում են համայնքի խնդիրների լուծմամբ, աջակցում են համայնքապետարանին՝ իր նախաձեռնություններում, հանդես են գալիս իրենց նախագծերով:_					

22. **Ձեր համայնքում կա՞ն երիտասարդության մասնակցությանը խանգարող հանգամանքներ և/կամ գործոններ («ոչ» ու «չգիտեմ» պատասխանների դեպքում անցեք 23-րդ հարցին):**
    - Այո
    - Ոչ
    - Չգիտեմ

23. **Նշեք այդ գործոններից հիմնական 3-ը:**

_____

24. **Ի՞նչը կփոխեիք համայնք-երիտասարդներ համագործակցության մեջ:**

_____

- **Մաս 3**

(այս բաժնի նպատակն է պարզել, թե երիտասարդներն ինչպիսի՞ մասնակցություն են ունենում պետության կողմից նախագծվող քաղաքականությունների ու որոշումների կայացման գործընթացներում)

25. **Պետական մակարդակում՝ որոշումների կայացման և քաղաքականությունների մշակման գործում, երիտասարդների մասնակցության համար կրթությունն ունի կարևոր նշանակություն:**
    - Միանշանակ համաձայն եմ
    - Համաձայն եմ
    - Համաձայն չեմ
    - Ընդհանրապես համաձայն չեմ
    - Չգիտեմ/չեմ կարող ասել

26. Ձեր ստացած կրթությունը օգնում է Ձեզ ակտիվ մասնակցություն ունենալ ՀՀ-ում երիտասարդական ծրագրերի ներդրման ու որոշումների կայացման մեջ:

- Միանշանակ համաձայն եմ
- Համաձայն եմ
- Համաձայն չեմ
- Ընդհանրապես համաձայն չեմ
- Չգիտեմ/չեմ կարող ասել

27. Երբևէ մասնակցե՞լ եք նախարարությունների կամ այլ պետական կառույցների կողմից կազմակերպված քննարկումների («ոչ» պատասխանի դեպքում անցնել 29 հարցին):

- Այո
- Ոչ

28. Նշեք, թե ի՞նչ թեմատիկ քննարկումների եք մասնակցել:

_____

29. Երիտասարդության հիմնախնդիրներին ոլորտին վերաբերող որևէ քննարկման մասնակցե՞լ եք:

- Այո
- Ոչ

30. Ո՞ր կառույցի և/կամ կազմակերպության կողմից էր այն կազմակերպվել:

_____

31. Ըստ Ձեզ ՀՀ-ում ո՞ր կառույցներն են ամենից շատ զբաղվում երիտասարդների հիմնահարցերով:

- Տեղական հասարակական կազմակերպությունները
- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը:

- Երիտասարդական նախաձեռնությունները
- Համայնքապետարանները:
- Մարզպետարանները:
- Միջազգային կառույցները:
- Ազգային ժողովը:
- Ուսանողական միություններն ու խորհուրդները:
- Այլ:

32. Լսե՞լ եք Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասին («ոչ» պատասխանի դեպքում անցեք 35-րդ հարցին):

- Այո
- Ոչ

33. Որտե՞ղից եք լսել Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչության մասին (ծանոթ չլինելու դեպքում անցեք 33 հարցին):

- Հանդիպել եմ այս վարչության ներկայացուցիչներին
- Սոցիալական մեդիա հարթակներում կարդացել եմ նրանց գործունեության մասին
- Հեռուստատեսությամբ լսել եմ նրանց գործունեության մասին
- Մասնակցել եմ նրանց կազմակերպած միջոցառումներին
- Դիմել եմ աջակցության:
- Չեմ լսել և ծանոթ չեմ նրանց գործունեությանը:

34. Երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ և շարունակական կրթության վարչությունն ի՞նչ գործառույթներ ունի՞ (նշել մեկից ավել պատասխան):

- Ապահովում է մասնագետների վերապատրաստումը, պատրաստումը, վերարակավորումը:

• Ապահովում է իտահետազոտական աշխատանքների իրականացումը մշակույթի և երիտասարդության հարցերի բնագավառներում:

• Կնքում և ապահովում է երիտասարդական ոլորտում միջազգային պայմանագրերի կնքումն ու դրանց իրագործումը:

• Երիտասարդներին ուղարկում եմ փոխանակման և այլ կրթական ծրագրերի:

• Համագործակցում և մասնակցում է տարբեր երիտասարդական կազմակերպությունների աշխատանքներին:

• Մշակում և/կամ ներկայացնում է առաջարկներ տարբեր ֆինանսական փաստաթղթեր՝ ֆինանսավորման համակարգի, հարկային քաղաքականության, աշխատանքի կազմակերպման, վարձատրության ու կենսաթոշակային ապահովության կատարելագործման վերաբերյալ:

• Սահմանում է երիտասարդության հարցերի բնագավառներում գիտատեխնիկական զարգացման ուղղությունները, աջակցում մշակութային, մանկական և երիտասարդական կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը:

• Ստեղծում է երիտասարդության վերաբերյալ քաղաքականություններ, ռազմավարություններ ու այլ փաստաթղթեր և ապահովում է երիտասարդական քաղաքականության քարոզչությունը զանգվածային տեղեկատվության միջոցներով:

• Տրամադրում է կրթաթոշակներ՝ սահմանելով առաջնահերթություններ ու համապատասխան չափանիշներ:

• Աջակցում է երիտասարդական ձեռնարկատիրության զարգացմանը, տեղեկատվական ու փաստաթղթային, խորհրդատվական և սոցիալական, մասնագիտական կողմնորոշման ու զբաղվածության երիտասարդական ծառայությունների և կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը:

• Աջակցում է երիտասարդության սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, նրանց իրավունքների և օրինական շահերի իրականացմանը:

• Քննարկում է քաղաքացիների դիմումները, ըստ անհրաժեշտության ու կարիքի տալիս է դրանց լուծումները:

35. Նշեք, թե որքա՞ն հաճախ եք Դուք և Ձեր ընկերները իրականացնում հետևյալ գործողությունները.

	Երբեք	Երբեմն	Հաճախ	Միշտ	Չգիտեմ/չեմ կարող ասել
Մասնակցում ենք նախարարության կողմից կազմակերպված միջոցառումներին:					
Հատուկ խմբերի և կազմակերպությունների հետ համագործակցությամբ մասնակցում ենք երիտասարդական ոլորտի խնդիրների վերաբերյալ քննարկումներին:					
Մասնակցում ենք երիտասարդների դերի բարձրացման վերաբերյալ հանրային իրազեկման արշավների:					
Ուսումնասիրում ենք նախարարության կողմից հանրային քննարկման դրված փաստաթղթերը, մշակում ենք առաջարկներ և մասնակցում հանրային հանդիպումների ու քննարկումների՝ պետական գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների հետ:					
Մասնակցում ենք երիտասարդական փոխանակման ծրագրերի՝ զարգացնելով մեր հմտությունները և կիսելով դրանք տեղի երիտասարդների հետ:					
Անդամակցում ենք տեղական կազմակերպությունների/նախաձեռնությունների, կատարում կամավորական աշխատանքներ:					
Աշխատում ենք միջազգային և տեղական կազմակերպություններում՝ երիտասարդների հիմնախնդիրների ոլորտում:					

36. Երիտասարդության ոլորտի վերաբերյալ փաստաթղթերի քննարկման մասնակցե՞լ եք:

- Այո
- Ոչ

37. Ի՞նչ առաջարկություններ կամ խնդիրներ եք վերհանել:

_____

38. Ծանո՞թ եք ՀՀ երիտասարդական քաղաքականության ռազմավարության նախագծի՞ն («ոչ» պատասխանի դեպքում անցեք 40-րդ հարցին):

- Այո, լսել/գիտեմ, որ այդպիսի փաստաթուղթ կա:
- Այո, տեղյակ եմ ու կարդացել եմ:
- Այո, տեղյակ եմ, ծանոթ եմ փաստաթղթին և մասնակցել եմ դրա վերաբերյալ քննարկումների:
- Ոչ, ծանոթ չեմ:
- Ոչ, չի հետաքրքրում:

39. Ի՞նչ կառույցի կողմից էր կազմակերպվել քնարկումը: Նշեք, թե ի՞նչ առաջարկներ կամ խնդիրներ եք վերհանել:

40. ՀՀ-ում կա՞ն երիտասարդության մասնակցությանը խանգարող հանգամանքներ և/կամ գործողներ («ոչ» ու «չգիտեմ» պատասխանների դեպքում անցեք 39-րդ հարցին):

- Այո
- Ոչ
- Չգիտեմ

41. Նշեք այդ գործողներից հիմնական 3-ը:

_____

42. Ի՞նչը կփոխեիք պետություն-երիտասարդներ համագործակցության մեջ:

_____

43. Կա՞ այլ բան, որ կցանկանայիք նշել:

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար,
Ձեր պատասխաններն ու կարծիքը շատ կարևոր է մեզ համար:

ISBN 978-9939-9295-1-4